

14  
13.



2004



# ՅԱՓԵՏԱԿՈՒԹՈՒԻՆ

ՀԱՆԴԵՊ ՇՈՎԱԼՃԻՆ ՄՕՏԱ-ՊՈՒՌ-ՆՐԻՒ

355

ՅԱՓԵՏԱԿՈՒԹԻՒՆ

Մ

ՀԱՆԴԵՊ ԾՈՎԱԼՃԻՆ ՄՈՏԱ-ՊՈՒՌՆՈՒԻՆ

ԳՈՐԾԱԴՈՒՆ ԵՒ ՑԱՅԳԱՆՈՒԱԳ


ՏԻԵԶԵՐԱՑ

ԳՐԵՑ

Հ. ԲԱՐՍԵՂ Վ. ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՑՈՒԽՏԵԿՆ ՄԻՒԹԱՐԱՑ

Հ  
Յ  
Ւ



ՎԵՆԵՑԻԿ

Ի ՍՈՒՐԲԻՆ ԴԱԶԱՐ

Ո. ՅԻՒ. — 1892

3706

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԻՃԱԿԱՆ-ԱԶՅՈՒՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈՒՆ

869

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



(3968  
41)

355-2004

18355

Պատճեն  
Պահպանություն

ՏԸՑ ՀԱՅԱ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



# ՅԱՓԵՏԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՆԴԻՊ ՇՈՎԱԼՃԻՆ ՄՈՏԱ-ՊՈՒՐՆՈՒԽ

ԳՈՐԾԱԴՈՒԽՆ ԵՒ ՑԱՅԳԱՆՈՒԱԳ

ՏԻԵԶԵՐԱՑ



ԱՐՁԱԿ արեգակն իր մայրը · դարձան և  
աստեղք՝ փայլել երկնից գմբէթաձիգ կա-  
մարին վրայ: Ի՞նչպէս չի գառնամ և ես մը-  
տօք և սրտիւ բերկրեցելով գէպ՝ ի աշխարհ-  
ածուին այն և ակն տիեզերաց, որոն մէջ ի-  
բրեւ՝ ի ջինջ հայելով կը փայլէ համագոյից մանրա-  
նկար պատկերը՝ բոլոր իւր հրաշալեօքն և զարմա-  
նագործութեամբք. և ուր հոգեկից եղբարց հետ  
՝ ի միասին թողուցի կարօտագին նաև այնքան ազնիւ-  
բարեկամներ: Ա՛հ, պահ մի միայն գիշերաժամուց  
լութենէն, խորազգաց տպաւորութիւն մ'և եթ  
լուսէր սրտին և վայրկեան մի լուսաւորութեան մը-  
տաց՝ բաւական են առնելու զիս իրազդաց բազմա-  
կնձիոն գաղտնեաց բնութեան, զորս գերաբուն  
Բարութիւնը հրաշազարգեց առատապէս այս սահ-  
մաններուս վրայ, և իմ աչքերս տեսան և պան-  
չացան:

Իսկ գուռ, լուսին մահիկեղջիւր, կամ մանաւանզ  
լուսալիր, որ հեղանազ սահելով մահկանացու հո-  
վիսներէն՝ ի վեր՝ կը բարձրանաս մերթ տիսուր և  
արիւնաներկ, և մերթ զուարթ և սպիտակազդեստ՝  
երկնից կապուտակ լճին վրայ, և քու գիւթիչ զօրու-

թեանդ անուշակ ազգեցութիւններով կ'օծես մահ՝  
կանացուաց բազմահոգ սրտերը. արձանացի՛ր  
պայծառացեալ՝ իշխանաց կղղույն և ֆէնէր՝ Պաղճէի  
վերե, ուր կեցին և մնչեցին երբեմն այնքան ա-  
նուանի և փափկակեցիկ փարաւազունք երկրի՝  
բազմադրուադ արարուածներով. և անտուստ սրբ-  
ուելով քու ձիւնափայլ ամպէդ՝ կաթնորակ ճառա-  
գայթներդ՝ արծաթազօծէ և դիեցու այն ծոցն և  
ծովը, որ իմ տխուր և զուարթ վայրկեաններուս  
արձագանքն ևս իւր ծփական ալեաց հետ տարաւ  
և բերաւ ծովէ ՚ի ծով։ լոսաւորէ և զուարթացու  
այն ծովափնեայ ծառաստանաց մէջ կառուցեալ և  
ամբարձեալ իմաստութեան և կրթութեան վեհ  
տաճարն, ուր ջահաւորեալ կանթեղաց և աչալուրջ  
հսկողութեան լուսոյն ներքե կը ննջեն և մնչեն ՚ի  
քուն խաղաղիկ՝ զուարթածաղիկ մանկըտույն առ-  
ընթեր՝ նաև հոյլը առաքինութեանց և ուսմանց։  
Ախ, եթէ չես դու քեզէն բաւական պարզել իսպառ  
խաւարակուռ գիշերոց քօղն և այն անթափանցիկ  
քոլի ներքե ծածկուած համագոյից զաղտնիքը,  
խօսեաց գէթ այս իմ ընդարձակուռած սրտիս հետ,  
ուր ամէն բանէն աւելի գիշերաժամու լուսութիւնը  
կը թագաւորէ և կը ներշնչէ յիս աւիւն նոր. վամն  
վի ինչպէս դու իմ սրտիս և մոտացու այսպէս և ես  
քու խորհրդաւոր լուսոյդ և խոր տպաւորութեան-  
ցը մէջ կ'ուզեմ դիտել և զմայիլ էիցս ՚ի հանդէս.  
որ առաւել քազցը և յափշտակիչ հրապոյրներով  
կը ներկայանայ ինձ այժմ՝ քան արեւու շացուցիչ  
պայծառութեան և տուընչենային աղաղակներու և  
աղմկաց մէջ։

Այս, ինչպէս խաւարը՝ լուսոյ, այսպէս ալ գիշերը՝  
տուընչեան հակապատկերն է։ Եւ արեւու ծագ-  
մանիը կը սկսին համագոյից զարթնուլը, կենաց

առաւուտն և կենաական գործողութիւններ. իսկ ա-  
նոր մտնելովն և գիշերի յառաջելովը՝ կարծես թէ  
կը մոնէ և կը թանգուզի ընդ երկրաւ և ընդ  
քնով նաև ենթալուսնեայց բովանդակ կեանքն և կե-  
նաց գործունէութիւնը. Մովսիսակիր ձեռին հրա-  
շագործակ գաւազանը գէպ յերկինս բարձրացած  
ժամանակ՝ շշափելի խաւարին հետ՝ մահաբեր  
քունն ևս երբեմն պատեց զերկիրն Եգիպտացւոց։  
Այս նորանշան իմն էր անտարակիոյ. սակայն առ-  
կէց շատ աւելի հիաքանչ է և խորհրդաւոր այն  
վեմ երեսյթն, որ ամէն օր մեր աչաց առջեւ կը  
կատարուի այնքան զարմանազան օրինօք, և մեզ  
համար այնքան ընտելական գարձած բան մի կ'ե-  
րմի։ Երբ կենաարեր արեւու վերջալուսոյն հետ՝  
ազօտ ճառագայթներն ևս կը կարճատին, և գիշե-  
րոց երկայնեալ սատուելը գիւթական գաւազանի  
պէս երկրագնդիս վրայ կը զարնեն, այն ատեն  
կ'ընթանան յարեսից յարեմուսու գիշերոց անե-  
րեսյթ արբանեակները՝ թմրուքիւն և Քուշն. ո-  
րոնք անիմաննալի զօրութեամբ և անծանօթ նրբ-  
անցքներէ թափ անցնելով բոլոր կենսունակ արա-  
րածոց բնութեան և գործարանաւորութեան խորն՝  
իբրև անուշակ օշարակով կը սրարբեցնեն զամէնքն  
ալ, և հրաշալի յեղափոխութիւններ յառաջ կը բե-  
րեն կենդանական, բուսական և նոյն իսկ հանքային  
կարգերու և խաւերու մէջ։ Այս ատեն, արդարե,  
փոխանակ տուընչենային գործառութեան՝ կը յա-  
ջորդէ ընդհանուր գործադուլն գիշերոց։

Հաւեք և թոչոնք՝ ինչպէս են առաջինք ՚ի զարթ-  
նուկ և ՚ի տեղաշարժութիւն, այսպէս ալ յառաջ  
քան զամեննեսեան կը փութան ՚ի դուկ և ՚ի դա-  
դար։ Արծուին հոլաթեեան շտեսնելով այլ ևս իւր  
հեռատես աչաց պայծառացուցին և միակ աղբե-

բակը՝ բոցակէզ արփին, կ'ամիսփիէ շտապաւ իւր  
կորովի թռիներն, և յուղելով օդոց և այերց խաւ  
'ի խաւ ալիքները՝ կը խոնարհի և կը ծածկուի սե-  
պաձև ժայռերու և քարանձաւաց ստուերացը մէջ,  
սպասելով անհամբեր այգուն և արեւուն: Բոնակալն  
և իշխող չորբոտանեաց առիւծն և վագր, այսպէս և  
ջոկք ամենի գազանաց, ոյք զտիւն ողջոյն կը լնուն  
անտառներն և անսպատճերն իրենց գոչումով և  
գուռումով, և ոյց մոնշիւնն եեթ կը դողացնէ սար-  
սափմամբ ուղևորս և երէվայրիս, մեղմացած իրենց  
եռանդանէն՝ կը դառնան վաստակաբեկ, և իրենց  
որջերուն մէջ կը փակուին: Այնոնց հրացայտ աշ-  
քերն անգամ ստիպուած են շիջելափառ նիրջել՝ ի  
քուն թանձրութեան. և քաղցէն աւելի՝ լրցու կարէ  
զարթուցանել զնոսա վերստին: Սոսկավիթիսար  
փիզն, որ իբրև անյագ ճարակաւոր՝ կոյս անտա-  
ռաց մէջ դարաւոր մայրիս իսկ իւր քնթռնոցով  
արմատախիլ կ'ընէ, արբեալ գիշերաժամու մրու-  
րով՝ մսեղէն ըլուրի մը պէս յեց առ կաղնեաւ կը  
նոյն և կը խորդայ. իսկ անոր հաստաբեստ որունք-  
ները թէե կրանիտեայ սիւներէն աւելի կարծր և  
անաեղիտալի՝ կը ճոնչեն հսկայաբերձ իրանի ներ-  
քե, առանց ճարճատելու: Ահագնացայտ վիշապ  
օձերն և կրիաներ, ոյք արեւու բոցատապ ճառա-  
գայթից տակ կ'եռային և կը զեռային, գիշերոյ  
խոնաւ օդը ծծերուն պէս՝ հինաւուրց ըլուրներու  
նման կը պաղին և կ'իյնան անխլիքա՛ի ցամափի,  
ինչպէս մեծամարմին կէտերն ալ Ովկիանոսի ան-  
գընդոց մէջ խարսխեալ ժայռերու և արշիպեզա-  
գուներու հանգոյն կը մնան առ ետեղ: Միջատնե-  
րըն՝ ոյք անթիւրազմութեամբ և բազմազան կար-  
գար բոլոր օրը կը թնդացնեն իրենց տպղիւնով և  
բղջիւնով, և զեռուներ՝ որոնք բոլոր հողը կ'ողեւ-

րեն իրենց շարժումով, կը լրեն իսպառ և կ'ընդար-  
մանան քնով անդ՝ ուր վերահաս գիշերը կը գո-  
ղանայ անոնց աշաց լրցն, և կը կաշկանդէ թևերը.  
այնպէս որ շատ անդամ չնշաւոր կարգի այս վայ-  
րացած ծաղիկները՝ բուսական կարգի անշարժ  
ծաղկանց բաժակներուն և անուշակ համբուրից  
մէջ կ'անցնեն իրենց գիշերոյ ժամերը. մանաւաղ-  
թէ ոմանց կեանքն այնքան կարճէ և վաղանցուկ, որ  
կը միացնէ զբունն ընդ մահուն: Բայց թէ ի՞նչ է  
առաջնոց զգացած հաճոյքն և երջանկութիւնն, ինչ-  
պէս և վերջիններուս կեանքն և մահը՝ իրենք իսկ  
գիտեն ոչ. զի հողէ կը ճնանին, բուսով կը մնանին  
և անդրէն շուտով՝ 'ի հող կը վերադառնան, թող-  
լով զկնի անհամար յաջորդներ: Բուսական աշ-  
խարհի հսկաներէն սկսեալ, որոնք կը ճնանին և կը  
ծերանան չասարակածին մօտ կամ բարեխառն  
կլիմայից ներքե, ծաղկաբեր ծառեր և ծաղիկք առ  
հասարակ՝ գիշերոյ ազգեցութեամբը կ'ամփոփին  
իրենց թերթերը շուրջ զբաժակօքն, որոնց վրայ  
ներգործեցին բոլոր օրն արեգական ջերմութիւնն և  
լրցու, քիմիական ճառագայթներն և կաղային և  
թթուուտային գործիչներ, և տեսակ մի քնոյ կ'են-  
թարկուին՝ զոր ինչպէս անոնց համար զգալի ան-  
հնարին է, այսպէս ալ մեզ բացատրելը: Բոլոր  
բուսական կեանքն և կարողութիւնք՝ գոգցես իմն  
կեղբօնացած են արմատին մէջ, և արմատն է միայն  
որ 'ի մեռելական լուռթեան անդ կ'առնու և կը  
բաշխէ զկեննունակ հոյզս և հիւթս՝ 'ի բարունակս  
և 'ի բունն, ուր հարիւրաւոր և հաղարաւոր ան-  
հատներ կեան և կը մնանին իբրև 'ի միում գեր-  
գաստանի. որոնք թէե տեսակաւ նման են իրարու,  
բայց ոչ նոյնպէս տիգը և զօրութեամբք: Բարբառը  
միայն հասարակ է անոնց, որ այն ինքն է լռուրիւն

՚ի միայնուրեամ և միայնուրիշնն՝ ՚ի բազմաշորութեան։ Այն տարեոր հսկը, որ կը չնչէ ամէն օր յետ միջօրէի և ամէն աշխարհ, այն քաղցրաշունչ զեփիւներն՝ ոյք բնութեան ձեռքով գործուած հովահարներու նման ծածանելալ բորբոքեալ օդն և կիզիչ ճառագայթները՝ կու դան, կը խաղապատեն և կը զովացնեն մեր քրտնաթոր երեսները, մանաւանդ թէ կենդանարար շունչ մ’ և սփոփանք կը սփուեն մահկանացու բնութեան վրայ, կը սկսին հետ զհետէ դադրիլ, և կամ անհետանալ յայրս և յայերս։ Դադրած են այն լայնատարր գործարաններն, որոնք մի վառարաններ են ամենազդի գիւտից և գործառնութեանց։ Իսկ գործատեարց բրոնութեան և տխուր հարկի ներքե շարժող այն մնեցն և մետաղեղէն մենքենայքն, որոնք տասնեակ ժամեր անընդհատ ճռնչելով և գործելով՝ կը հաշին և մաշին, գիշերաժամուց մէջ միայն կարեն ազատ շունչ առնուլ, եթէ օրէն իցէ անզործութիւնը կոչել ազատութիւն։ Դադրած են արդէն ստորերկրեայ հանքերու և գետնազամբաններու մէջ ոգեսպառ՝ այն թշուառ արարածներն, ոյք կորմաններով իրենց առողջութիւնը, կենսական զօրութիւններն և աստուածադիծ պատկերը, կամ այն է որ անմարմին ուրուականներու նման կը շարժին անբարառո՞ւ ազօտաճանչ լուսոյ մ’ և ստուերաց մէջ, և կամ անհոգի արձաններու և մեռեալ պատկերաց պէս ինկած են աստ կամ անդ, աւազ, կարծես թէ աւելի մահարեր օդը՝ քան թէ քնոյ և գիշերային հանգստեան կենսունակ բաժակը ծծելու համար։ Դադրած են և այն քաջակաղմ և հուժկու բեռնակրաց աւազելի մահարեր օդը՝ քան թէ քնոյ և գիշերային հանգստեան կենսունակ բաժակը ծծելու համար։ Դադրած են և այն քաջակաղմ և հուժկու բեռնակրաց աւազելու համար ծնած են, բայց անոնցմէ շատերը՝

տնանկութեան և ծանր բեռնաց տակը կորացած՝ անարդ տրմուղներու նման կ’իյնան՝ ՚ի գետին։ Իսկ այլք գիշերային հանգստեանը գեռ չի հասած՝ դառն և անմիտթար մահուան մթնոլորտին մէջ իրենց յետին շունչը կու տան և կ’առնուն։

Սակայն գիշերաժամու մթութեան հետ՝ խօսկան լուութիւնն ևս կը յառաջէ մեծաքայլ։ մանաւանդ թէ արդէն սկսած է թագաւորել ամենուրեք, ածեւլով ընդ իւր՝ անողոք հարկ մ’ և աճապարանք։ Մեծամեծ շահաստանաց և ոստաններու բազմամարդ փողոցներն և հրապարակներ իսկ, որոնք դարուս և ժամանակիս Եղիւսեան դաշտեր համարուած են, քիչ ատենէն գերեզմանատանց նման անբարբառ լուութեան պիտի ենթարկուին։ միայն թէ անոնց մէջ երկնաբերձ նոճիններ կը տատանին լուսնի լուսով, իսկ ասոնց մէջ նուազ բազմութիւն մի՝ բարեկեցիկ և զբօսաէր մարդկանց։ և այն իսկ գիշերուընէ դողցած պարապոյ վայրկեաններն՝ առաւոտեան բազմագանձ ժամուց հետ փոխանակելու համար։ Բայց և այս հարկ ինչ է անխուսափելի մարդկային ընկերութեան, որ կը խուսէ՝ ՚ի միայնութենէ։ Բարէ, քանիններ իրենք զիրենք երանիկ և երջանիկ կը համարին այդ վայրկեաններն ուրախութեամբ անցունելուուն համար, և քանիք արդեօք թշուառ՝ զայնս յանակնկալ ժամուն՝ ՚ի սուդ և ՚ի տրտմութիւն փոխուած տեսնելով։ Սակայն իսկզբանէ այսպիսի սովորոյթներ չկային, և ոչ ալ բնութիւնն ստեղծեց մարդկային անհատներն իրարմէ անջատող այսպիսի մեծամեծ խորոցներ։ Լոկ քաղաքակրթութեան և բարոյից են արգասիք, և ժամանակն և պահանջը են, ոյք ծընան այսպիսի քաղաքակրթութիւնս և բարս, յառաջերով միշտ դարուց և ամաց անխուներուն վրայ և

և յաղթելով կենաց և կենցաղակցութեան դժուար-ընդել պայմաններուն և պայքարներուն։

իսկ դուք, Բաժա՛կդ երջանկութեան և Մրո՛ց թշուառութեան, որք կրկնահոսան աղբիւրներունման բղանեցիք մարդկութեան արմատէն և կը մնայք միշտ անմեկին՝ ի մարդկանէ. մանաւանդ թէ կը վարէք իսկ զանիւ մարդկեղէն կենաց և զալօրիկն հոգեշարժ՝ ի վեր և՝ ի վայր. օ՞ն առեալ՝ հեղայք զեղայք այն սրտերու մէջ՝ յորս կ'իշխէ գիշերն օրակուլ՝ ի ժամուս, և որոնց մէջ կարելի ըլլայ թերես գտնել դուլ և դադար ընթացից ձերոց։ Սակայն ոչ զի ինչպէս երջանկութեան և թշուառութեան ամաններն են՝ դիւրաբեկ և դիւրափոփիս, այսպէս ալ դիւրաւ պիտի փոխուին կարճատեալ վերջալուսէն թողած վերջին վայրկեաններն՝ ի նախընծայ ժամս երկայն և տխուր գիշերոյ, և օրուան զուարթաձայն բերկրութիւնն՝ ի խոր լուռ-թիւն բազմահառաչ։ Բայց թխատիպ, Մտուե՛րդ գիշերոյ, ովք որ կը փութաս Եւլոսի նման ծովուց և ցամաքաց վերեկն՝ խոնաւ ձեռօքդ ձգելու տիեզերաց ու վայրագոյրը, թոյլ տուր ինձ պահ մ' ևս խարսխեալ՝ ի միջակէտն ազգաց և աշխարհաց՝ դիտել ծովածուփ մարդկութեան վերջին ալիքներն, որք արուեստական լուսոյ և գիշերախառն ստուերաց մէջէն ընթանալով՝ կը բախին իրարու՝ առանց խորսակելու, և կը ճեղին՝ ի գաղաք։ Եւ դիտե՞ս արդեօք, ընթերցող, թէ ո՞րն է այդ միջակէտը։ Ոչ Պարիզ աշխարհամուտ, ոչ Լընտըն բազմաժողով, և ոչ իսկ վիեննա կամ Բեռլին, Պետերբուրդ և կամ յաւիտենականն հռովմ։ Ոչ։ Այլ է նա ինքն կ. Պօլիս, է որբանն և որորողն բազմամբու բազմաժողով, և աղամագարդեալ՝ ձիւնաքատակ կարապներու նման՝ կը սահին պազպաջուն ջրանցից վրայէն, մնչելով՝ ի սրտի կամ՝ ի բերանի սիրոյ երգերը. լայց ո՞րքան աւելի նազելի պիտի լինէին այնպիսիք, եթէ շոայլ արդուզարդի համար վատ-

ընդ Եւրոպիոյ և Արևելք՝ Արևմտից հետ հրաշապէս։

Դարձնենք աչքերնիս մեծ կամուրջին վրայ, որ արուեստական կամարով, կամլաւ ևս հօրիղնական շղթայով մի կը միացնէ զանարուեստն Ռակեղյուր՝ ընդ Վոսփորունի։ Կրկի՞ն հրաշալիք բնութեան։ յորս մարդկեղէն արուեստն՝ ևս քան զիս կ'արտափայլէ։ Հարիւրաւոր ազգերու և տարազներու վերջին մնացորդքն՝ հոս կու գան և կը խոնին. այնպէս զի կարելի է ըսել, թէ հիւսիսային ծովափանց վրայ թեապարող երամ երամ բագերու բազմութենէն աւելի սոցայս է ակնապարար և ուշագրաւ. մանաւանդ այն հարիւրաւոր բարբառներն՝ ոյք միահաղոյն՝ բայց խառն՝ ի խուռն կը հնչեն՝ ի լսելիս՝ բիւր հոգեծփանօք։ Մարդկային յորձանքին հետ կենաց և ապրուստի մեծագոյն մրցանքն ևս հոն կը կեդրոնանան և անկէ կը սփոխն յարուարձանս քաղաքին։ Շոգենաւոց, թրամվայլից և կառաց գործագույն ևս մօտեցել է. ահա կը լսուի նոցա վերջին սոյլն ևս՝ ծովու նահանգաց և յուշկապարիկներու ձայնին հետ, և ամենուն ընթացքը կ'ուզզի գէպ՝ ի առ այնս։ Ռմանք կարծես թէ Ամոնի թերուն վրայ յեցած կ'երագեն գէպ՝ ի տունը, գէպ՝ ի այն ընտանի յարկը, ուր տխուր գիշերոյ ազդեցութեանը դեռ բոլորովին չենթարկուած՝ կը կարծեն իրենց սիրելի որդւոց և ամուսիններու խանդակաթ գուանաց մէջ քամել երանութեան բաժակը։ Ռմանք սպիտակ մակոյիններու և մոշերու մէջ նատած և պճնազարդեալ՝ ձիւնաքատակ կարապներու նման՝ կը սահին պազպաջուն ջրանցից վրայէն, մնչելով՝ ի սրտի կամ՝ ի բերանի սիրոյ երգերը. լայց ո՞րքան աւելի նազելի պիտի լինէին այնպիսիք, եթէ շոայլ արդուզարդի համար վատ-

նած գումարը՝ աւելի մոտաց և սրտի մշակութեանն  
՚ի գործ ածած լինէին։ Ոմանք շատախօս ճպուռնե-  
րու նման աւելի կը շաղակրատեն՝ քան թէ կ'ըն-  
թանան փոշիամպերու մէջ։ Ոմանք ալ ջղջիկաննե-  
րու հանգոյն՝ լրիկ և մնջիկ խաւարչուտ վայրերը  
պատռելով և առուելները չափելով՝ ներքնուղի-  
ներու մէջէն շշիւնով և շնչիւնով յանկարծ դի-  
մացդ կ'ելլին. իսկ այլք ոմանք ազօտ լապտերներ  
ձեռքերնին առած՝ շրջմալիկ հրայ և կայծորիկներու  
պէս ծամածուռ կ'երթեեկեն. բայց չես գիտեր, թէ  
առ ի՞նչ և ո՞ւր . կեանքը վայելերու արդեօք՝ եթէ  
ծախելու համար. Սակայն վայ անոնց, որոնց կարծ  
որոնքները շաղվարներու՝ մէջ պլլուած կամ ծան-  
րաբեռն իրանին ներքե կրեալ՝ կրիայի քայլերով  
հազիւ թէ ոտն ոտանէ կը շարժեն, և 'ի շարժեն  
ցանկ ՚ի վասնգի կան կամ նըրափողոցաց ան-  
կիւններուն զարնուելու, որոնք մեծ քիթերու նման  
դուրս ցցուած են, կարծես ուրիշին դպչելու և ա-  
րուեստն ու արուեստագործը նշաւակելու համար.  
և կամ զայթելու ճամբուն վրայ հորերու պէս բա-  
ցուած խոռոշներու մէջ։ Լայնարձակ նեղուցներ կե-  
ցած են գեռ եւրոպական ափունքէն՝ յասիականն  
անցնելու համար, ինչպէս Սախայէն ալ յեւրոպա-  
կան ափունքը. սակայն չիկան Քարունդէ կամ Ախե-  
րոնի համբերատար մեռելակիրներ, մանաւանդ  
ուր գիշերն աւելի սաստկապահանջ դարձած է և  
մամնան ալ սպառուած՝ օրուան զուարճութիւննե-  
րով։ Հաղար աղաչանք, հազար և մի քիշիշրներ,  
որոնց ձայնն աւելի ազդու է հոս, փարայ մի չեն ար-  
ժեր։ Միով բանիւ, կարելի է ըսել, թէ վալպոր-  
գիսի գիշերն և ֆառստի ուղեւրութիւնն այնքան  
բազմադրուագ արարուածներով և երեակայու-  
թեամբ ճոխ չեն, որքան անցքս այս կամուրջէն ՚ի

շրջակայ լնակութիւնս, և օրուան գործառնութե-  
նէն՝ ՚ի գործագուն գիշերոյ. Որչափ որ կարեկցիս՝  
դեռ շատ և շատ կարեկցութեան նիւթեր կան. որ-  
չափ զարմանան՝ տակաւին զարմանալու բաներ կը  
մնան. և հուսկ որչափ որ գրես և խօսիս, գարձեալ  
անթիւ գրելու և խօսելու առարկաներ կան և մնան.  
Սակայն ՚ի զուր է խօսիին և գրելը, զի այս երկնիս  
ներքե ամենայն խօսք և զիր իբրև խուլ արձա-  
գանգներ մնալու դատապարտուած են. և օդաքա-  
րերու և կարեկրտի հոսանքներն աւելի կանոնաւոր  
կերպով կ'ընթանան օդոյ մէջ, քան թէ մարդկային  
իրեր և արարուածներն՝ այս մթնոլորտիս մէջ։  
Սակայն մարդկային ընկերութեան այն հոսանքն՝  
որ փողոցներէն և հրապարակներէն ընթանալով  
լճացաւ տուներու մէջ՝ վերջին տեսարանն է կենո-  
ունակ աշխարհի, որ կը կասի ՚ի գործելոյ. բազ-  
մաշառաչ աղմուկն այն, որ կը հնչէ բոլոր իւր զօ-  
րութեամբը, յետին ձայն է բնութեան՝ որ կը  
նուազի։ Մեցած է գիշերոյ երկրորդ պահն, և աչա-  
ամենայն ինչ գաղարած. խաղաղական լուսթիւննը  
միայն կը տիրէ ամէն տեղ, զոր ստամբակի հներու և  
շաքարներու հաջումը կու գայ ընդհատել մերթ ընդ-  
մերթ. և թագաւորն արարածոց մարդ՝ հուսկ յե-  
տոյ ամեննեցուն կը փակէ իւր աչքերն ՚ի քուն  
թանձրագոյն, շուրջ պար առեալ այնքան արարած-  
ներէ. բայց թէ ՚ի մահ արդեօք, եթէ յարթնու-  
թիւն. զայս Սատուած միայն գիտէ։

իսկ գու, հոգի՛ լուասէր. սի՛րտ զգայուն, որ կա-  
ցիր մնացիր անքուն ՚ի մէջ այնչափ անշափ քնացո-  
ղաց, և յափշտակուած ես արդ բնութեան այդ նո-  
րաքանչ երևոյթներով. ի՞նչ կը խորհիս արդեօք։  
ի՞նչպիսի ծածուկ պատճառներ յառաջ բերին այս  
տիեզերական գործագութիւննէ թաքուն զօրու-



թիւններ կը ներգործեն այժմ՝ ի լոռւթեան և 'ի մահաթմբիր բնութեան արարածոց : ի՞նչ է կեանքն և գործարանաւորութիւնն . ուստի՞ կը սկսին և ուր կը վերջանան : ի՞նչ է գիշերն և գիշերախառն լը-ռութիւնը : ի՞նչ է արթնութիւնն և քուն . ու ի՞նչ են այն համայնածախ թթուուտներն, որոնք դարձեալ համայնից կեանք կու տան և շարժումն . որոնք յերկրէս կը յառաջադային և կը վերադառնան առ երկիրս . - ի՞նչ է այս անհուն անջրապետութիւնս, ու բուն մէջ կը շարժին և կը շրջին յաւէժաբար հազարք հազարաց և բիւրք բիւրուց լուսաւորաց : Միտվլ բա-նիւ, ի՞նչ է այդ համագոյից պարառութիւնը կամ մանաւանդ Տիեզերքն, որ ամենայն ինչ իւր մէջ կը պարունակէ (բաց յամենաստեղծ Արարչէն) . որ կը շարժի և կը շարժէ բիւրաւոր արեգակներ . որ կը հնանայ միշտ և միշտ նոր է . - ի՞նչ ծածուկ զօրու-թիւններով ապականութիւնը՝ ծննդեան կը փոխուի և ծնեալը՝ վերստին կ'ապականի, և այս շրջայաշար յաջորդութիւնս՝ ուր պիտի յանդի վերջապէս, կամ ո՞րն արդեօք պիտի ելլէ յաղթական այս պայ-քարէս :

Այս, գաղտնիք են այս ամենայն և գժուարա-կնճիռն առեղծուածներ՝ բնութեան քօղին տակ ծածկուած, մանաւանդ թէ երկրիս կեղրոնէն տւե-լի թանձրագոյն պատեանի մի մէջ պատառուած : Հողապատեանս աչօք անկարելի է հայել և նկատել զինու նոցա, թէպէտե օձի և արծուի հեռատես բի-րեր ևս կարելի ըլլար յարմարցնել : Այս, երևոյթ-ները միայն սովոր ենք մենք դիտել և ոչ թէ գոյա-ցութիւնը : իսկ գերբնականին և յայտնութեան ձայնը քաջ՝ ի բացեայ կը հնչէ մեղմէ, որուն խուլ արձագանգն հազիւ ուրեմն կը հասնի մեղի՝ բնա-կան խորհրդոց նկատմամբ :

Սակայն ոչ . թէպէտե կէտ մի ևեթ փոքրիկ ի-ցեմես առ մեծամարմին տիեզերօք, և տիեզերական պարունակին մէջ ծնանիմ, ապրիմ, գործեմ և մեռ-նիմ . բայց չեմ բնաւ կապուած և կաշկանդուած անկէ : Եւ եթէ չնչին գործարան մի միայն հողա-պատեան աչաց՝ կարող է առ ինքն ձգել զուսա-պատկերս անտանելի աշխարհաց, մանաւանդ թէ Տիեզերաց իսկ գլխովին, որ կը հորվի իմ զլխոյս վերև . ինչու ուրեմն չպիտի կարենայ բանական միտքն ևս, լուսաւորեալ՝ ի նշովից գերաբուն լու-սոյն, հետազոտել զնրինս և զթագուն որակու-թիւնս իրաց բազմաց . վասն զի ինչպէս ացն ամէն մարմին, ամէն գոյն և ամէն ձև տեսնելու, այսպէս ալ միտքն՝ ո՞ր և իցէ էութիւն մ'իմանալու և ըմբըու-նելու համար հաստեալ է 'ի բնէ :

Այո՛, արբեալ գիշերաժամու հզօր ազդեցութիւն-ներով և զինեալ այս աստուածատուր և թափան-ցիկ հեռագիտակովս՝ կը նետուիմ ահա մեր կիսա-գունդը պատով իսացա՛ր և լոռորիշն, ձեր մէջ . յածելու համար ծովէ ծով, ցամաքէ ցամաք, լիռնէ լեռ, անտառէ անտառ, աշխարհէ աշխարհ, միջոցէ միջոց, ժամանակէ ժամանակ, սերնդոց՝ ի սերուն-դը, յարարուածոց յարարուածս և վիպաց՝ ի վէ-պը . որովհետեւ ասոնցմով կը միանան մասունքը բո-լորին հետ՝ տիեզերաց Ցայգանուազը կազմելու հա-մար . և բոլորն է՝ որ կը հիւմէ զնորն և զին, զգոր-ծարանաւորն և զանգործարան էակս . որ իւր նորա-պանչ գաշնակաւորութեամբը կը յօրինէ մեր սրտին և մոտաց յափշտակութեան, ինչպէս նաև հանրական կարգի, մշտամրմունջ քնարը :

Բայց նախ քան զամենայն ներուի ինձ երկու խօսքով հարթել գժուարութեան այն ժայռը՝ որ կ'արդելու իմ ընթացքս յառաջելու մնդրագոյնս,

և յարդարել զուղին, որ կը հանէ 'ի ն գատակն : Արդ, գիտենք թէ ձայնը՝ թրթռմանէ մարմաց և ընդ օդս ծածանելէն յառաջ կու գայ, իսկ թըրթը լումնէնքն՝ 'ի շարժմանէ : Ուրեմն եթէ եղաւ գործադուլ հասարակաց և կասեցաւ շարժումը, լուռթին միայն մեռելական է բաժին գիշերոյ, և ոչ թէ ցայդանուադ տիեզերական :

Այս, այսպէս պիտի լինէր, եթէ տիեզերը առհասարակ 'ի նմին ժամու գործադուլ ընէին, և կամ 'ի գաղարեն՝ բացարձակ անդործութեան ենթարկուէին : Այլ, ընդհակառակն, մէկ կիսազնդին վրայ կը կատարուի այն երևոյթն, ուստի իւր մնաս բարեան ըսերով արարածոց՝ մեկնած է լուսատուն և կենսարերն ենթալումնեայց՝ ակն արևու, և գայցած է արթնցնել միւս կիսագումդը : Իսկ ընութեան արտաքին գործողութիւնն և կենաց կցորդութիւնքը դադարած ժամնակ՝ ներքինները կը սկսին : ինչպէս կենդանականին ձայնը լուսած ժամնակ, անկենդան կարգերը յառաջ կը մատչին : Այսպէս ուրեմն ներանձնացեալ աշխարհն՝ իւր շարժողութեամբք, գործողութիւններով և կենաց կցորդութեամբք եթէ ոչ բոլորովին, այլ շատ տարբեր է արտաքնայարդարէն : անտարակցու տարբեր կը հնչեն գիշերաժամոց լուսութեան մէջ նաև անոր յօրինած ցայդանուագն և մեր վրայ ազդած տըպաւրութիւնքը : Զիք անդ անշուշտ թէթովն կամ Մայերէր, ոչ Շուրէր կամ Ռոսսի, ոչ Գունօ կամ Վէռդի, չիք և հոյակապն Վագնէր : այլ է ձայն բընութեան և բնութիւնք համագոյից, որք մերթ կ'երգեն և կը խօսին, և մերթ կեան լրիկ և մնջիկ . սակայն անոնց լուսութիւնն իսկ երգ է, մանաւանդ թէ առաւել ազգեցիկ քան զամենայն երգ :

Այս, մթութեան մէջ ինչպէս աղօտաձաճանչ լոյսն

անդամաւելի գեղեցիկ կ'երեխ և հրապուրող աչաց, այսպէս ալ գիշերային լուսութեան մէջ նուռազեալ ձայնն իսկ բնական՝ աւելի անուշ է և աւելի ազդու լեզուով մի կը խօսի մեր լսելիաց և սրոտի թելերուն հետ : Այս, ջահից կամ ելեքտրական լուսոյ մէջ ոչ միայն աղամանդին, այլ նոյն իսկ աղամանդակրին գեղն աւելի կը փայլի և կը մոգէ : սակայն լուսէն և գեղեցկութենէն աւելի ձայնական դաշտնիքն է, որ որտերը պէս պէս յուզմամբք և մոգերը՝ խոհերով կը լցնէ : Մանաւանդ թէ խօսուն և անխօս էակաց բոլոր ցասման և ցանկութեան արտայայտութիւնները՝ ձայնին մէջ կը կեդրոնանան, երբ լոյսն և գեղեցկութիւնն արգէն իսկ անհետացած են շիջելափառ : Ձայնը միայն է սիրոյ և ատելութեան թարգմանը, որ կ'երգէ շատերու զուարթութեան յառաջաբանն և արտանութեան վերջաբանը : Ձայնը միայն կը համոզէ և կը յաղթանակէ : միուլ բանիւ ձայնին մէկ վանդիւնը՝ շատ է երբեմն 'ի փրկութիւն կամ 'ի մահ :

Տիեզերական ցայդանուագին ծրագիրն և ձայնանիշերը՝ մեր մոտաց մէջ գրոշմուած են՝ իրբե անյեղի և մնայուն յենթակայի : Սիրտն է այն ամենազգայուն և կատարեալ գործին, որուն տաստերու կամ ստեղանց վրայ կարող է երգել մէն մի էութիւն, մէն մի բարութիւն, և մէն մի գեղեցկութիւն, որ կայ կամ կ'երեխ և կը շարժի . և երգն ինկնին ուրիշ բան չէ՝ բայց եթէ շափով և թուով շարժմանց և թրթումանց յառաջածագը, որ կը դաշնակատրի մեր զգացմանց և խմացութեան հետ :

Այսպէս ուրեմն գիշերաժամուց լուսութեան մէջ կ'երգեն այն հարիւրաւոր դարերն և մարգկային սերունդքը, ոյք բազդաւորութեան և անբազդութեան անիւներուն վրային դառնալով՝ անցին գնա-

ցին, թողլով մեզի միայն զուարթ և տխուր արարուածներ՝ աշխարհիս մեծ թատերաբեմին վրայ։ կ'երդէ արաբացի ուզեռն և գիշերագնաց կարաւանն՝ իւր աշեղ այծեամն և ուղարամը։ կ'երդէ Պարսիկն իւր Ռիւստէմն և Թէհմինան։ կ'երդէ Հելլէնն՝ իւր Հերակլէսն և Հեղինէն։ կ'երդէ Հայն՝ իւր Սաթինիկն և Արգամը։ կ'երդէ Ցաճիկն իւր կիսալուսինն և լուսաբեր Արուսեակը։ կ'երդէ Խափիշիկն և վաշկատու Գնչունն՝ իր վրանն և վրանապահ Հներամը։ կ'երդէն խումն և դուժ՝ իրենց սրտի սիրածն և սիրոյ անձնաւորութիւնը։ Ալ կ'երդէն անլուելի ծովերն իրենց մշտատատան ալեք և ալեծուփ գոչերով։ կ'երդէն գետեր և աղբւրներ՝ իրենց կարկաչաճայն խոխչանօքը։ կ'երդէն Հովանաւոր մայրիք անտառաց՝ իրենց աշգարթագեղ ոստերով։ կ'երդէն հովեր՝ իրենց սուր կամ թաւաձայն սոյլերով։ կ'երդէն տատրակն և աղաւնին իրենց մելամնաղնոտ մեղեգիներով։ կ'երդէ անտառաց շահապետ և գիշերոյ խօսնակ՝ սոխակն իւր հաղար և մի ելեհներովն և դայլայիկներով։ կ'երդէ իշխողն լճաց և լճածին շուշանաց սիրատարփ կարապը։ Երգէ նաև գառնուկին մայիւնը, կատուին մշաշիւնն, ովի մըլկրկոցը, եղան վագելը, սքաղաղի կանչելը, սիրամարգի սրածայն լալիւնը, հնդկահաւփ կուրո՛ւն, սագի և բարդի մեծապոչ դա՛ դա՛ դա՛ նա՛ դա՛ դա՛ նա՛ հաջումը և բոլոր այն բազմանուագ ձայները, որոնք կը լսուին կամ ընտանի յարկին տակէն, և կամ բացօթեայ գաշտէն և բացական անտառներէն։ Երգէ, մանաւանդառաւել քան զամենայն երգ քաղցր կը հնչէ մանկան դիեցումն և 'ի ծոց գորովագութ մօրը մնչելը։ կ'երդէն միջատներն և զեռուններն, որոնք մարդաց և շուշանաց փափկիկ անկողիններու մէջէն կը

ֆսամն ու կը ֆսամն՝ 'ի լեզու խորհրդական։ կ'երդէն գորտեայք և պարք համօրէն տրիտոնից, սպամանդրաց և աքուլութից՝ իրենց կուրուռն, ուշահուշա'ն, եե՛ գատարն ու մե՛ռուզ մե՛ռուզը կ'երդէն շատրուանները, ջրվէժք և ձկունք՝ իրենց աննման ցիշվիլն և ձի՛փախիլ լուսնեկին մէջ։ կ'երդէն այն անհամար մանրաճճիններն՝ ոյք հազիւ թէ կենաց նուազեալ շունչ մի կ'առնուն և կու տան ընդմէջ օգոց և հոգոց։ և կը ճգնին յօրինել զօղն անգործարան, կարգաց՝ ընդգ գործարաններու, և գործարաններու կարգը՝ շնչաւորաց հետ խորհրդաւոր յօդիւ պարաւանդել։ կ'երդէ գաղթական կոռնկը կըթղաձայն, եկեալ գող իմն աւետարեր մեր բացական հայրենիքէն, և կ'երթայ 'ի մեծն հեռաստան։

Զարթի՛ր 'ի ձայն նուիրական հաւուն և դու, ով իմ վշտակիր պանդուխտ, եթէ ննջեցիր երբէք խաղաղիկ. դու՝ որ թողլով 'ի տան զամուսին և որդիս սիրելիս, կը հառաչես անքուն այս նշգեհ ափանցս վրայ։ Զարթիր 'ի նուագ քու տիրանցը բիւր ախերովդ և վախերով։ սազէ հոգետաւելիդ և վշտահան սրտիդ քնարն, եթէ չունիս գաշնամուր. ձայնէ առ եկաւորն օգաչու, ձայնէ առ աւետաւորն Հայոց « զկրունկ ուրափի » կու գասն։ Հարցուր զմիւլքերդ ու այդիսդ, հարց մանաւանդ զեղերամացրդ չ—ն։

կ'երդէ և մայրն համօրէն երկրածնաց լուսինն, որ իբրի անձերանալի յաւերժահարսն երկնից՝ կը նաւարկէ օգեղէն ծովուն վրայ, և սփոերով 'ի վերուստ իւր լուսագեղ վարսերն երկրիս երեսին՝ առինքն կը գրաւէ զսիրտս արաբածոց։ կ'երդէն այն բիւրաւոր և միլիոններու աշխարհներն, ոյք գարձակարձ շրջանօք կը հոլովին յաւիտենական խո-

ըերէն՝ դէպ 'ի մեր հորիզոններ, և մեր հորիզոններէն՝ ալ անծանօթ խորոց մէջ. ոյք կաթեցնելով իրենց ջինջ պարունակներէն շող ակնապարար, կը շարժին, կու գան և կը խօսին մեր հոգւոյն հետ կ'երդեն մանաւանդ այն լուսաւոր աշխարհաց մէջ բնակող՝ բայց մերիններուն նման կամ աննման ուրիշ էակներ, որոնց կեանքն ես, անշուշտ, մերոյս պէս անյագ կրից յարատե կոռուի մէջ է, և կ'եռայ ու կը զեռայ իւր բազմապիսի ցաւերովն և բերկրանօք 'ի վեր անդր, ինչպէս մերն ալ 'ի ստորին կողմն երկրի: կ'երգեն վերջապէս երկինքն և երկիր՝ բոլոր իրենց պարառութեամբք. կ'երգէ և գիշերն իւր խորախորհուրդ ճգնաժամերով, և մեր լսելքը բաւական չեն 'ի լուր նոցին: Եւ յիրաւի, եթէ անշունչ սրինդն միայն լի է այնքան ներշնչութեամբք, և անխօս քնարն՝ այնքան խօսուն, ո՞րչափ աւելի ուրեմն ընդհանուր կարգի այս ցայդանուագը, ուր անշնչոց հետ՝ շնչաւորք ևս ընկերացած են, և բնութեան հետ՝ հոգերանական աշխարհն ես կանգուն կեցած և կ'երգեն իրենց բիւր բարբառներով և տպաւորութեամբք: Ո՞վ կարէ կալ այլ ևս անզգայ, երբ անբացատրելի ներշնչութեանց և զմայլմանց այն մագնիսական հոսանքներն, որոնք կ'ընթանան բնութեան խորերէն՝ մեր սրաից խորշերուն մէջ և մեր սրտերէն այլ փոխադարձաբար դէպ 'ի բնութիւնը, կարծես թէ անխուսափելի հարկ մի կը ծնանին մարդուս մէջ՝ անձնատուր ըլլալու աղբերց և գետոց, որք խոխոջալով կ'ընթանան և կը կոչեն զսիրտ: մարդագետիններու, ծաղկազարդ հովտաց և ծառաստանաց, որ նորախայծ ժպիտով մ' և գորովալից գթով կը թուին փարել զմեօք: Միով բանիւ, մահկանացուն մարդոյ երբ այսքան ներգանակութեանց և յափշտակութեանց

մէջ ստիպուած է թողով լքանել զինքն 'ի նինջ այս հասարակաց մօր գրկաց մէջ, ինչպէս անպարտելի հակայն հինաւուրց՝ 'ի գիրկս դալիլայ, անդէն կը լոէ անմահ հոգւոյն ձայնը. ի վեր, 'ի վեր անդր, մնոր և քու Արարչիդ ծոցը. 'ի վեր յաղբերն ամենայն բարութեանց: Եւ մինչդեռ մարմնասէրն և վատշուէրը՝ գերեալ են 'ի ձեռու զգայական հաճոյից և խօլական անրջոց, որոնք խարեպատիր Փղտացւոց նման գաղտագողի կ'ընդմտանեն 'ի ննջասենեակս և յառագաստ անդր հարսանեկան. մանաւագ թէ երլ սոքա գիշերային մրուրովն արբեալ և թմրեալ կը գնին իրրե զՀողեբեռն զերթդիակն ցուրտ, անդիէն կը լսուի կուսական սրսկապանէն առաքին բնարարութեան ձայնը, որոնց մէն մի արիական ընդդիմադրութիւնն 'ի փորձութիւնն՝ չքնազ յաղթանակ է սրբութեան և պսակ փառաց. մէն մի զղական աղազակն՝ արժանիք է բիւրապատիկ վարձուց հատուցման:

ԱՇ, նաև օրուան ակնախտիդ լուսոյն մէջ սեթեեթեալ քանի քանի տգեղութիւններ և, բնական տգեղութենէն աւելի գէշ, արուեստակեալ գեղեցկութիւններ ո՞չ արդեօք գիշերաժամու մժութեան մէջ յայտնուեցան և կը յայտնուին, ինչպէս գիշերոյ նման լուռ և խառարամնծ պատրանքներն և պատրող վայելքն ևս շուտով կը լուծանին և փարատին այսպահուս, թողլով միայն ցաւս և հառաչս առ անյեալն և յապագայն: Նա միայն նուազ պիտի ցաւի, որը թէ իւր պատրանքներն և թէ ստոյդ կարծեցեալ վայելքն տպատօրէն ընարած է, և գիտէ վարել իւր կենաց զեակն այնպէս 'ի ձախող ելս բարզին, ինչպէս յանդորրական ալիս ծովուն յաջողուածոց: Այլ քեզ երանիւ և բիւր երանի, մանկիկ, որ գեռ կենաց և կենցաղոյս պայքարէն հեռի

գտնուելով՝ զաղբիւրն իսկ յարաճուն կը տանիս՝ ի քեզ. որ լոկ մայրական օրօրով մի կը փակես լուսափարփառ աչքերդ և կը պարարես անուշակ քնոյ և ոսկեհատիկ երազոց մէջ։ իսկ զիս՝ որ կամ՝ ի զնին համագոյից, տիեզերաց բարբառն և հիացուցիչ ցայդանուագն անդամ չեն բաւական յորորել՝ ի քուն։ Այս, մեծիմաստն լայբնից և Պղատոնն երազեցին միայն զայն. իսկ ես կը զգամ՝ ի ժամուս անոր վսեմ գաշնակաւորութիւնն ևս՝ բոլոր իւր յափշտակիչ ազգեցութեամբ հանդերձ։ Եւ որշափ կը զգայ սիրան իմ, այնչափ աւելի կ'եռայ արիւնն յերակունս. կը հատանի քունն՝ յաշացս. կը բորբոքի խելապատակն՝ ի գանկի. կը բանին միտք իմ և կը ճախրեն, հրաբուն գնդաց նման,՝ ի նորանոր իմաստո և բանահիւսութիւնս ազնուին և գեղեցին. զի ասուերամած երկիրս այս, գպրոցս այս աստուածպետութեան, ուր թէպէտե մէն մի արարած մատնանիշ կը ցուցնէ ինձ զԱրարին մեծ, և մէն մի էակ՝ իւր յատոկ բարբառովը կը լինի նմա օրհներգու, սակայն նեղ և անձուկ են վասն իմ։

Բարէ, կը հայիմ՝ ի վեր, և ահա կը հողովին աստեղազարդ երկինք. կը հողովի անոր հետ և երկիր լուսնիստ, որ է մայր և դայեակ այնքան արարածոց. կը հողովին և կը յառաջեն բոյլք լուսազեաց՝ իրենց երագաստուր ընթացից մէջ, յօրինելով կաճառ իմն համախումբ։ կը յառաջէ Սայլլ իւր լուսաւոր ճամբուն վրայ. կը յառաջեն կենդանակերպ՝ իրենց բազմադիմի երեսով։ կը յառաջէ երգարան Քնարն անձայն նուագօք՝ ի լուր Որիսնի։ կը յառաջէ կյիւնն կշոելու համար զժամն գիշերց և հանգստեան մարդկան։ կը յառաջէ շինելափառ նաև աստղն բեկուային՝ ձգելով

առ ինքն զաչս և զյոյս գարուցս անցաւորաց. կը յառաջեն անոր հետ, և գոգցես իմն բեկուեալ յայն, ակաղձուն նաւքն և նաւազք Թմարշի՝ վարեակը՝ ի ծով աշխարհի, ՚ի Հիւսիս և ՚ի ծուփս բազմահոգս։ Թոնի յառաջեն և արջային Ովկիանոսէն արջնաթոյր մէզք և մառախուզք. թոնի գոռան ամենուստ ամպրոպք և փոթորիկք, զի Ռողեցոյցն նորագիւտ՝ բաւական է ուզգել նաւողաց ընթացքն անխոտոր ՚ի վեր և ՚ի վայր։ թէպէտե բիւր Սկիւզայք և Քարիւպգայք ելլեն ընդ առաջ. թէպէտե ծածկիցի աստղն այն և առաջնորդ յաշաց. սակայն լաստափայտն այն, որ կարեց անցաւ Սառոյցի և Զերմութեան ահաւոր դարերը, նոյնը պիտի անցնի Հիւսիսի մշտնջնաւոր սառոյցներէն և յաւիտենական ձիւնով կազմակերպուած և անանցանելի լեռներու վրայէն, երկրագնդոյս բեկուին վրայ իւր և գիտութեան յաղթական դրօշը կանգնելու համար։ Այսպէս կը յառաջէ և լուսին գէպ ի միջակէտն երկնից։ Այսպէս կը յառաջեն և պիտի անցնին չորեգերապեան ժամբն աւետարանականք՝ Տեառնագոչ զանդակաւ. այսինքն է երեկորեայն՝ զուգեալ՝ ՚ի հասակն արգիւնաշատ, բայց կարճեալ, խափանեալ և ՚ի զօրութենէ պակասեալ ծերութեան հետ. ընդմէջ զիշերինը՝ զուգեալ յամենայնի ձեռներէց և կարող, բայց գիւրագայթ Երիստասարդութեան հետ. հաշախօսին՝ ձեալ ՚ի Մանկորթիւնն, որ կը վարդի ընդ մէջ խաւարի և լուսոյ, ընդ մէջ մեղաց և արդարութեան, և կայ ՚ի կանգնումն և ՚ի զլորումն բազմաց. հուսկ ապա ընդ առաշօտինը՝ զուգեալ՝ ՚ի հասակն անմեղ, անոխակալ և աննենգ Տղայութեան, որ նա ինքն է որդին լուսոյ. որ թէ իւր քաղցր ժպիտովն և թէ ողբանուագովը կուգայ բանալ մարդկութեան հորիզոնին վրայ նոր

կենաց և նորոգ պայմաններու լուսափայլ արշալոյն : Ահ, չի կայ լուսաւոր մի, չի կայ հաստատուն կէտ մի ընդ երկինս և ընդ երկիր, յորում խարսխեցայց և խարսխեցից զայս իմ մշտափթիթ . մանաւանդ ես ինքն իբրև յաներեցիթ զօրութենէ ձգուած կ'ընթանամ միահաղոյն : Եւ կը կանչեն 'ի բացուատ ծաղկընկէց աւուրջ մանկութեան և պատանեկութեան առ իս, թէ Մի' մոռնար մեզ: Կը կանչեն և վարդն և շոշան հովտաց, թէ դարձ առ մեզ: Սակայն ուղին յոր կ'ընթանամք՝ է ամենեին անդարձ . ծաղկին տիոց՝ յորում կը բերկրի մարդ՝ է դիւրաթառամ և վաղանցուկ: Զոյդ ընդ փախստական նշյլս աստեղաց՝ կը խուսեն ինձմէ նաև ժամք և վայրկեանք կարճատեալ կենաց . և ես 'այերով ցաւագին զինի նոցին՝ կը գոշեմ զարմացմամբ . Բամ, ասայր ոք ինձ ունել գէթ զվայրկեանն զայն փրկական, որ ծնողն է անսպատ յաւիտենականութեան և յաւերժական երանութեան: Ուր ինդրեցից զքեզ, ով անդին մարդորիտ լուսափայլ . ուր ծածկուած ես արդեօք . երկնային զարդուց և զօրութեանց, թէ երկրաւոր գտնձուց մէջ: Ախ, ծիր կաթին վրայ զքեզ որոնած ժամանակ խուսափական աչօքս՝ սիրոտ ես կը հաչէ և կը հառաչէ առ քեզ լիափափագ, ով ծայր և ծրար իմոյս երանութեան: Այլ յերկնից և յերկը կը լսեմ խորհրդաւոր ձայնի մը պատղամը, թէ 'ի քեզ և յանքննելի վճիռս Նախասահմանութեան ծածկեալ կը պահի վայրկեանն այն: Կը դտոնամ և կը հայիմ յերկիր :

Սակայն երկէս ցնդական շողիներ և գոլորշէք, ծուխ և փոշի միայն գէպ 'ի յերկինս կը ծառան . և ծառն ինքնին մարդկեղէն կենաց՝ ծուխ է և շոգի լուծական: Իսկ երկնից 'ի վերտառ մերթ

օգերեւոյթք և շամանդալ, և մերթ գանդրահեր և ոսկեթել ամպեր գէպ 'ի յերկիրս կը վայրաբերին: Լեռանց բարձանց վերևէն ելեքտութեան ակնախտիղ փայլակներ՝ խաբուսիկ յոյսերու և իդաբերու նման երագ երագ կը ծնանին և կը մեռնին կապուտակային երկնից ներքեւ ինչպէս սոքալ մարդկային սրտերու մեջ: Եազարձրի բարձանց վրայ հովանացեալ և թաւ անտառները հրդեհեալ կ'այրին և չեն շինանիր: Հինաւուրց մայրիներ և կաղնիք, որք առ ետեղ ծնամն և ծերացն՝ կը տապալին մեծաւ շառաչմամբ, և վարսամներու նման կը բորբոքին 'ի հուր: Նորատի և մըշտագալար ծառասառներ՝ արտասուաց հեղեղներ թափելով յոստոց՝ կողբան և կը հեծեծեն լալադին: Երէվայրիք ամենայն խոյս տուեալ՝ կը փախչին 'ի վեր և 'ի վայր դարաւանդից. թոշոնք և շահապետք ծառաստանաց՝ ահարեկեալ խառն 'ի խուռն ընդօդս կը յածին և կոծին . և ջրեղէն ծովուն վերև հրեղէն ծով մ' ալ կը տարածուի բոցավառ: Հովիտները՝ լի են ցաւօք և հեծութեամբ, և հովուական սրինգն է որ կը զուարթացնէ զայն: Ախտից հեղեղներով ողողուած են հրապարակներ և փողոցք քաղաքաց, և ողորմածաց ձեռքերը չեն համենիր: մաքրելու զայնս: Ոծիրք և եղերունք՝ զագիր ճիւազներու նման կը թափառին տանեաց և անցուդարձից վրայ, և Նենիգորիշենը ծածկելով իր մոհաթոյն գաշոյնն ընդ վերարկուալ՝ կ'ընդմտանէ թագթաքուր ամենուրեք: Մահկանացուք առհասարակ թագուած են խոր քնոյ և անբջոյ մէջ: և գիշերոյ արհաւելիքն՝ ևս քան զես կը յաճախեն երևակերպութեան բազմադիմի ցնորբներն, որ գողցես միայն կ'իշխէ և կը զործէ անհատից մէջ: իմացական Եսմ 'որ իրագէտ է ամենայնի, կար-

ծես թէ առանց գիտակցութեան մնացել է քնոյ  
և արթնութեան սահմաններուն մէջ : Հոգեկան զօ-  
րութիւններն և կարողութիւնք՝ կեդրոնացած են  
յերևակայութեան անդ : Քնոյ անձնաւորութիւնը՝  
մեկոնն ՚ի ձեւին՝ կը հսկէ բոլոր կենսունակ արա-  
րածոց զգայարանաց վրայ՝ իրեւ հրեշտակն մահու :  
Եւ այս պահուս կը լսուին խոր լուսութեան և գի-  
շերաժամուց մեծ ճօճանակի բախիւնին հետ՝ նաև  
բացական երաժշտութեան բերկրական ձայնը , որ  
ոմանց ծնունդը կ'աւետէ , և բուհճակին տխրագին  
կարկաչն , որ այրոց մահ կը դուժէ : Սակայն այն  
քնաբեր մահուան մէջ աւելի՝ քան յարթնութեան  
կ'ընդունին իրենց երակաց և սակրոսեաց մէջ ու-  
ժամափ անդամները՝ բարձմապիսի հոսանս կենաս-  
բեր զօրութեանց , զորս լուսինը , թթուուտք և  
խոնաւութիւնն ինքնին կը հեղուն և կը զեղուն ,  
յանզգաստից , անոնց մէջ՝ իրեւ անսպառ ազբիւր-  
ներ : Այս , ինչպէս արեգակն է միահեծան իշխան  
տունջեան և աղբիւր չերմութեան , որ կը շարժէ  
զիւլէս բազկացու մարմոց . այսպէս ալ լուսինն է  
իշխանուհին այն գիշերոյ և աղբերակն խոնաշու-  
թեան , որով տարեգը իրարու հետ կը շազկապին  
և կը գործեն հազար և մի հրաշակերտա գործա-  
րանաւորութեան և անգործարան մարմոց : Եր-  
կիր և երկրածինք առհասարակ կը զգան խորա-  
պէս իրենց ընդերաց մէջ բոլոր այս ծածուկ զօ-  
րութիւններս . անոնց մայրական արգանդի մէջ  
բիւրաւոր սերմունք կը բեղնաւորին և կը բար-  
գաւածին ՚ի կեանս և ՚ի ծնունդ նորանոր . և ան-  
կերպարան նիւթը՝ քնոյ և թմբութեան ազդեցու-  
թեան ներքև կը զգենու յաջորդաբար արիւն ,  
ջիզ , նեարդ , սակերս և մորթ : իսկ գործարանա-  
ւորը կը լինի չնչաւոր և կենդանի . և վայ անոնց ,

ոյք մարմնաւոր յաջորդներ չի թողլէն դուրս՝ հո-  
գեոր և մուաւոր ամկութեան իսկ կը դատապար-  
տեն անձամբ զանձինս . վասն զի այսպիսեաց կեան-  
քըն և յիշատակներն այնպէս պիտի ընկղմին ՚ի  
յաւիտենական մոռացութեան , ինչպէս անձրեսի  
կաթիւներն ՚ի խորս ծովսւ : Օրուան մէջ և արեւուն  
լուծիւներութեան ներքև շոգիացած կաղերը , շա-  
քարներ և բոլոր այն անուշաբոյր հիւթերն իսկ ,  
դորս մի առ մի թուելն անհնար է , գիշերաժամու  
դովութեամբը գարձեալ կը թանձրանան և կը թօ-  
թափին երկրիս վրայ՝ նորահրաշ կերպերով : Այն  
ատեն կը չնչեն և կը ծծեն բոյսերը՝ կենսաբեր կազու ,  
արտաշնչելով զմահածինը կամ ածխածինն : Այն  
ատեն կը լեցուին և կը պարարին պտուղները՝  
թթուուտներով և անուշակ հոյզերով , ինչպէս վար-  
դից և համասպրամ ծաղիկներու բաժակներն ալ  
բիւննով և ռետնիւ , զորս արեգական չերմութիւնն  
և քիմիական ճառագայթներն՝ յետոյ պիտի եփեն ու  
ծեփեն : Այսպէս ուրեմն գիշերաժամն ինչպէս կեն-  
դաննեաց՝ այնպէս ալ բուսականաց համար է գոր-  
ցես տօնն այն և բազուսական խրախճանը , զոր լու-  
սինն և ամառնային եղանակն՝ ևս քան զես հեշտալից  
կը գործեն համահաւաք հրաւիրելոց համար :

Սակայն դուք , ով գիշեր նսեմաստուեր . ով եր-  
կինք աստեղավառ , որ արագ արագ հոլովելով՝  
կածէք ՚ի հանդէս զհամապատկեր տեսարանս մե-  
ծամարմին տիեզերաց , ոն առեալ յամեցուցէք  
զընթացս ձեր վայրիկ մի . զի ահա նոր սքանչելիք  
իսկաբուն զօրութեանց՝ կու գան յաւելով ՚ի  
սքանչելիս արտաքնայարդար երևութից բնութեան ,  
և կը գրաւեն իսպառ նաև զուշ և զուրուշ մոտացս :  
Ահաւասիկ ամենաշիլոյց ջրոյ հետ՝ միացած կը  
տեսնեմ ես հուրն համաճարակ . և առաւել քան

զզօրութիւն հրոյ՝ կը բորբոքի ինչ մի նորահրաշ  
 'ի ջուր անդր՝ Այսպէսահացուրտը՝ ջերմին հետ,  
 և կեանք ընդ մահու լծեալ՝ կը շարժեն և կը վարեն  
 զնիւթեղէն համագոյս : Ծնունդն ապականութեան  
 և ապականութիւնը ծննդեան կը յաջորդեն դար-  
 ձագարձ : Ծովերն անապատներու կը փոխուին,  
 մէկ դիշերէն ցմիւս դիշեր, և այրեցաւեր անա-  
 պատները՝ կենդանածին և կենաբոյծ ծովերու :  
 Բարձրակատար լեռները՝ յանկարձ կը խոնարհին  
 և իրենց խորանիստ անդնդոցը մէջ կը դահավի-  
 ժին . իսկ խորանդունդ ձորերէն և ծովերէն հրա-  
 հալ և ջրակազմ լեռներ՝ ի վեր կը բարձրանան :  
 Հօս՝ ծարաւուտ գետինը՝ բերանաբաց յորդաջուր  
 գետերն անդամ կը կլի բովանդակ . իսկ հօն հին-  
 աւուրց ժայռերն զգայուելով՝ բիւր աղբերակունս  
 կը քղխեցնեն անդադար, և բիւրաւոր հոսանս  
 վասկաց : Աստի երկրիս ներքնընդերացին կազերը  
 պատռելով յեղակարծումն ժամու իրենց հասարա-  
 կաց մօր արգամնդը՝ կ'ասպատակեն հողագնդոյս  
 վրայ և մթնոլորտիս մէջ . կը դաշնակցին ուրիշ  
 տարերաց հետ և նորակազմ աշխարհներ կը ստեղ-  
 ծեն . իսկ անտի երկրաւորքա լուծուելով՝ ի ծուխ և  
 ՚ի փոշի մանրամադ՝ անդէն՝ ի տեղի նոցա կը փոխա-  
 նակեն : Այսպէս կը փոփոխին երեսք երկրի, կը փո-  
 փոխին և սահմանք և պայմանք կենաց : ինչպէս ե-  
 ղանակք եղանակաց և հողմունք հողմոց, այսպէս ալ  
 ապականութիւնը վերածնութեան և վերկենցա-  
 զումն ապականութեան կը յաջորդեն, շրջանօք :  
 Աչօք իսկ բացօք կը տեսնեմահա, զի անդորձարան  
 տարելրս՝ ծուխ և շոգի, փոշին և օգ և այլ լուծա-  
 կանք՝ հաստատուն մարմնոց վերածուելով՝ պէս պէս  
 կերպարանքներ կը զգենուն . իսկ հաստատուն մար-  
 մինք զրկուելով իրենց կերպարանքէն՝ կը լուծա-

նին՝ ՚ի հոգ, ՚ի շոգի և ՚ի կազս ցնդականս : Մանա-  
 ւանդ թէ նիւթազանգ տիեզերք առ հասարակ, իւր  
 բազմազանութեամբ հանդերձ, միայօդ կապով մի  
 պարփակեալ արարչութեան համապարփակ շրջա-  
 նակին մէջ կը հորվի, կը հասնի իւր չուակէտը,  
 կը դառնայ, կը հնանայ և կը նորոգուի միջաւ : Ար-  
 դարև էր երբեմն նկատ մի, յորժամ չկայր այս  
 գեղեցիկ տիեզերքս . բայց ձայնիւ բարբառոց Եհո-  
 վայի՝ եկաւ չգոյն՝ ՚ի գոյ : Բանն՝ որ ասաց, նոյնն և  
 հաստատեաց զօրէնս եղելոց : Բարութիւնն ամէն-  
 երանեան՝ որ գրգեաց և գգուեաց զլոյծ զանգուածը,  
 նոյնն և բարեղարդեց և կենդանաբերս արար :  
 Մովսէս՝ աւանդեց զջննդաբանութիւն աշխարհի .  
 Արխատոտէ՝ ուսումնասիրեց : Թօվմաս և մեծն Ալ-  
 բերտ՝ մոտաց աչօք զննեցին . իսկ Լապլաս, Նետոն,  
 և Արագօ՝ ՚ի ձեւն փորձառութեան չօշափեցին զա-  
 մենայն : Մի՛ ևս գոչեր սրբազան քնարաւդ, ով  
 երանելիդ Յովլ, թէ երթեալ իցես՝ ՚ի դանձն  
 ձեան և կարկափ . և թէ ուստի՝ յառաջ գան հրա-  
 շալի երեսյթք բնութեան : Ահ, մեծն Պլինիոսի,  
 Ժիւսիէօյի, Լիօյի, Միլն Եղուարդայ և նմանեաց  
 ձեռքով յայտնուած են այդ ամենայն : Օդերևու-  
 բարանուրիշնեն և Երկրաբանուրիշնեն ստոյդ գիտու-  
 թիւններ կը կազմեն այժմ : Հեռադիտակը՝ բացած  
 է արդէն զպատրուակ Հայկին, ուստի կը ճառա-  
 գայթեն բիւր արեգակունք : Խոչորացոյցը՝ կը բա-  
 նայ գիմացնիս անհամար նորանոր՝ մանրաշխարհ-  
 ներ, որոնք հնոց գլխովին անծանօթ էին . և գի-  
 տեմք փոքր՝ ՚ի շատէ, թէ ամէն բան հաստատուն օ-  
 րինօք կը գոյանայ, կը տեսէ, կը գործէ և վե-  
 րըստին կը կերպարանափոխի : Բայց թէ ի՞նչ են  
 այն կազմակերպիչ սկզբունքներն . ի՞նչ են անոնց-  
 մէ կազմուած իրաց գոյացութիւններն, և թէ ի՞նչ

պիտի լինին . ահաւասիկ մի մի բնական խորհուրդ՝ ներ՝ ծածկեալ 'ի խորս բնաղանցական ճշմարտութեանց : ի զուր կը գանդաշեն Եպիկուրոսք և Դիմոկրիտէսք իրենց կոյր Դիկուռանովն և Հիւլեականուրեամբ . զի ամէն բանի վրայ կը տեսնեմ ես զդրոշմամէնիմաստ ճարտարապետին : ի զուր կը ջանան կարդեսիս և գասանդի՛ իրենց մեքենական շարժմամբն և երկրաչափական ձևակերպութիւններով կերտել երկնային և երկրաւոր մարմիններ . զի ամենայն իրաց մէջ կայ և կը դորձէ ներքին և ընդարբոյս զօրութիւն մ'ես : ի զուր կը բանդարուշեն Ֆիխտէ , Շէլինդ և Հէգէլ իրենց մոտցածին Եսականուրեամբն և անդրերկրացին Համայնաստուածուրեամբը . զի անկերպարան զանգուածն աշխարհի , և նոյն իսկ իրք բազմակերպեանք , յառաջ էացան քան զԵսն մարդկային . և թէ իրական աշխարհը տարբեր է գաղափարականէն : ի զուր կը դոչէ Սպինոզա՝ իւր միաւոր գոյացուրեան դրութեամբն , և կը ձկտի աստուածացուցանել զբնութիւն համօրէն . վասն զի վերինք և ներքինք կը պատասխանեն , թէ բազմաւոր ենք մենք գոյացութեամբ , և գործածք ժամանակաւորք՝ անժամանակ և անհաղորդական էակին : ի զուր կը ճգնին մեծիմաստն Լայպից և Բոսկովիչ՝ իրենց Մենատարրականուրեամբն և կեդրոնաձիգ և կեդրոնախոյս զօրութիւններովը՝ կազմել զմարմինս բաղկացու 'ի պարզականաց անտի . զի պարզապէս պարզքն ոչ երբէք կարեն կազմել զթանձրացեալ ձևով և տարածութեամբ . այնու զի ընկզմին 'ի կէտն մի անտարած . և թէ կեդրոնաձիգ և կեդրոնախոյս զօրութիւնք՝ արգասիք են արդէն բաղկացու մարմնոց , և ոչ կրկին բաղկացուցիչներ . և թէ 'ի յիսկն հայելով՝ կեդրոնաձիգն , այսինքն է

առաձգական զօրութիւնը միայն կայ իրապէս . իսկ միւսն՝ առնչական ևեթ է մարմնոց քանակութեան և ծանրութեան : ի զուր կը գոչեն և բարեւ շրջականք իրենց բարեշրջման դրութեամբ . զի բնութիւնք իրաց են և պիտի մնան անվորիխելի , նաև 'ի բարեշրջեն որակութեանց և պատահմանց : Վերածնուրինը միայն՝ ուրեմն անկերպարան նիշքի և կազմիչ կերպարանի զոյդ սկզբունքներովը կարէ հանել զմեղ մինչև 'ի ծագս արարչութեան . իսկ աստի և անդր՝ չիք այլ շաւիդ ընթացից : Ուստի 'ի բերան անսահման անջրպետին , որ կ'անջատէ զարարածս յԱրարչէն , հարկ է զկայ առնուլ . մանաւանդ թէ 'ի գուճս անկեալ առաջի ամենակարող Զօրութեանն , որ անշարժելին է և կը շարժէ զամենայն , գոշել մեծաձայն . ի քէնէ , Տէր , աղբիւր կենաց , և գու անստուեր լուսոյդ մէջ պիտի տեսնեմ տիեզերացս գաղտնիքները : Այս , Տէր , այս յաւետենի աշխարհիս մէջ աւելի հեշտին է կալ 'ի մթան գիշերոյ , նստել 'ի ստուերս մահու 'առ 'ի դիտել զոյս , առ 'ի ձեռս բերել զանմահութիւն . իսկ 'ի հանգերձեալ յաւիտենին՝ գուանձառ լուսոյդ միջէն պիտի դիտենք զմշտագիշերն մահացելոց և զզարդս զայս տիեզերաց :

Յառաջէ , ուրեմն այսուհետեւ , գիշեր , զի մշտածադող օրուան կը փափաքեմ ես : Յառաջէ , երկիր լուանիստ , զի նորոյ երկնից և երկրի ակն ունիմ : Յառաջեցէք , լուսափայլ աստեղք , 'ի բարձոնս . զի 'ի բարձանց երկնից օր մի պիտի դիտեմ զծեղ՝ առաւել պայծառացեալ և փառաւոր : Յառաջեցէք և գուք , էակք ամենայն , որ շուրջ զինե կը պարայածիք . զի եթէ երկնապարիկ աստեղները գահավիժելու և ըլլան կեդրոնէ 'ի կեդրոն , եթէ երկիրս հանգոյն թոիչ աստեղաց զարնուի ընդ պարելս մի

ապառաժ և փշրուի . եթէ դադարելու ևս ըլլան շարժմնաք երկնից , սակայն և այնպէս ձեր և նոցա էութիւնքը պիտի մնան յաւիտեան անեղծ . վասն զի անեղծ է և անշարժական գերաբուն բարութիւն , որուն հազորդեցայք յէանալր ձեր . վասն զի անեղծօրէն պիտի շարունակուի զաշխարհս արարչագործող և պահպանող ջեսչութիւնը : Յառաջեցէք , անդրանիկ ծնունդք արարչութեան , հոյք զուարթնոց , որ թէպէտե ոչ կ'ապականիք և ոչ կը ծնանիք , բայց աւելի բազմաթիւ էք քան զլուաւորս ամենայն . որ անընդունակ գոլով տիսրութեան՝ կը ժպտիք միշտ , երանութեան ժպիտով , բնդ քնքուշ մանկանն յորրանի . կը բուրէք հոտ անուշութեան ընդ ծաղկան՝ ի դաշտի , կը փայլկոտայք ընդ լուսապայծառ աստեղս երկնի , կը շարժէք զկեդրոնաց կեդրոնն յանհուն անջրպետի , և կը պարայածիք շուրջ զաթոռովն Անեղին :

Յառաջեցէք և դուք , ընակք և եկք , խաւարակուռ յարտարախին , այլ միշտ յաջէն՝ ի ձախ . յառաջեցէք յԱխերոնեանն հեծութիւնս և՝ ի կոծ . յառաջեցէք , որ էքդ և չէք . որ կորուսիք խապառզբարին կամաց՝ մտացն եեթ և գոլոյն պահելով՝ ի ձեզ չարախտավար : Ոն շարժեցէք մշտատատան , որ եբրև զնետ թիւնալից խարսխեալ մնացիք՝ ի շար անդր : Յառաջեցէք , անցէք՝ ի հանդէս՝ գժոխոց խաւարամած թագաւորութեամբն և տանջանարանօք . անդնդախոր վհերովն և ծխով և մահաշունչ մթնոլորտովք : Յառաջեցէք , ո՛վ որ շգիտէք կարեկցիլ մէկու մի , և քան զրնաւս կարեկցութեան էք արժանի : Ուրիշ բանի համար չեմ կանչեր զձեզ , զի և չէք իսկ բարեկամք և բարերք մարդկութեան , ինչպէս խօթամիտք ոմանք՝ ի հանճարեղաց կարծեցին , բայց եթէ՝ ի յօրինել

զբոյրն և զստուերակողմն շրջանակին տիեզերաց և զտիւրական նախերգանս ցայգանուագի նորին . վասն զի դուք էք պատճառ մեղաց և մահու , և ձեզմով սփռեցան չարիք և աղէտք՝ ընդ տիեզերս . դուք խանշգարեցիք զանիւս կարգին և արեծիդ կառքի նորին :

իսկ դու , Արարիչ և միակ Տէր ամենայնի , որ լծելով զանկերպարան տարերքս կամ զնիւթն ընդ կերպարանաց , զհոգի և զշոնչ՝ ընդ թանձր մարմնոց եղանակները՝ ժամանակաց և ժամանակը՝ միջոցին հետ , ցամաքն ընդ աշխարհատարած ծովուն , և ծովը՝ օդոյն հետ , չարն՝ ընդ բարուոյն և խաւարը՝ լուսոյ հետ , կը վարես ընդ անհետ ուղին յաւիտենից . արդեօք իրբե գնդակի ինչ՝ ի մականախաղի նետեցիր , քու միահեծան գաւազանովդ , զտիեզերս զայս՝ անսահման անջրպետութեան մէջ . և կամ իցէ՞ ստոյգ , ինչպէս կ'ըսեն թերահաւատք , թէ կը զուարձանաս իսկ յաղէտս՝ ի ցաւս և յերկունս արարածոց : Ո՛չ , ոչ , ոչ բնաւ : Թէպէտե խաւարաւ գիշերոյ պատես երբեմն մեր մեղսասէր աշքերը . թէպէտե որսուրնդոստ ամպոց ճայթմամբ և շանթերով ահարեկես մեր երկրաքարշ սրտերը . թէպէտե երկրաշարժներով և ողողմամբ իջուցանես՝ ի գժոխս և հանես . թէպէտե սովով և սրածութեամբ և բիւր հիւանդութեամբք տառապեցուցանես զմեզ , սակայն և այնպէս հայր ես բարեգութ և խնամող ամենեցուն : Ոչ այնպէս կառավարն՝ զկառքն իւր և նաւապեսն՝ զնան յալիս ծովուն , ինչպէս քու ամենակալ զօրութիւնդ՝ իմաստութեամբ կը վարէ զաշխարհս՝ ի կէտ նպատակի . և մանաւանդ՝ ի կարծեցեալ չարեաց անտի՝ ստէպ ստէպ բարիս իսկ յառաջ կը բերէ : Դու , Տէր հոգեսէր , թոյլ սոուր ինձ ուրեմն , քու արարչութեանդ պարունակին անցնիլ՝ ի պարունակն յեսչութեանդ ,

առ որ կը հնչեն և մնչեն յերկրէ ուրախականաց հետ՝ նաև տրտմական երդք մահկանացուաց :

Սակայն ժամերուն հետ՝ կը փոփոխին նաև իմ մտացս յափշտակութեան տեսարանները : կը լսեմ հինաւուրց զրոյցները . կը լսեմ նախկին դարուց և ժամանակաց համբաւը : Մարդկութեան անցեալը՝ ներկային հետ կը միանայ, և ներկայն՝ դամքան զգամ ընդարձակուելով՝ կը ձգի յապագայն : Պատմական վէպերն և վիպասանական պատմութիւնները՝ շղթայշար կը թուին իրարու յաջորդել, և կ'անցնին գիշերային ստուերներէն՝ լուսնի խորհրդական լուսոյն մէջ, յօրինելու համար տիեզերական ցայդանուագին ողբերգական մասերը :

Բազմազլիսեան ջիդրայի նման տարածուած կը տեսնուի հինաւուրցն թիւզանդիոն ընդ մէջ երկուց ծովուց, կարկառելով յաջ և յահեակ իւր գեղանի բազուկներն՝ անարուեստ աւազաններու, այսինքն է ծովալիճներու մէջ . և առասպելեալ Պրոմեթեսի պէս միշտ նորանոր տեսարաններ կը ներկայացնէ եկաւորաց առջն՝ բիւր հրապոյրներով : Անոր չորս կողմերէն կը թեսապարեն, գեղագիտակ նաժիշտներու պէս . բազմաթիւ բազմաբնակ գիւղաբաղաներ, թերակղիներ և կղղիներ . որոնց մէն մի հայեցուածն՝ հարիւր արձագանդ է պատմական և անպատում վիպաց :

Այո՛, անոր հիւսիս-արեւելեան կողմէն կը տեսնեմ Արգոնաւորդաց չուն և զոյդ մի գեղաղէշ պատանիներ, Փրիւքսոս և չեղին, որոնք հերապանձ և աշեղք՝ ոսկեղեղմն խոյին վրայ հեծած կու գան զուարթադէմ և կանցնին վոսփորի նեղուցէն : Որուն երկու կողմէն կը բարձրանան, իրենց յափշտակիչ գեղովը, ծառապարդ և շինաւէտ բլուրներ և դարաւանդներ . ոյք, ո՞ր գիէն որ նայելու ըլլաս,

Պրոմեթեսի նման նորանոր կերպարանքներ կ'առնուն և հիափանչ տեսարաններ կը ներկայացնեն երկնից Տիկնո՞ց շպարիչ վրձինի ներքե, որ առասպելեալ ինդիմոնէն աւելի՝ այս դալարագեղ և մշտազուարծ ծառաստանաց վրայ կու գայ, կը հանգչի և կը փարի սիրելաբար . և այդ բազմաբնակ արուարձանաց, անզուգական վեմութեանը վրայ՝ անբացատրելի քաղցրութիւն մ'ես կը սփռէ : Ե՛կ, անցիր աստի և դու, ուղենոր, սիրահարդ գեղոյ բնութեան . զի եթէ տիսուր ես, շուտով պիտի զուարթանաս . և եթէ հասեալ՝ ի ցուրտ ձմեռն ծերութեան՝ շուտով պիտի խաղայ քու երակացդ մէջ կենսաշոնչ գարունն մանկութեան : Սակայն ես ծովամնին և խեղդամահ եղող չեղինի համբաւէն աւելի՝ անոր ողբերգական ձայնն է, որ կը լսեմ ամբողջ չեղեսպոնտոսի երկայնութեամբ . և դարք անդամ և յեղափոխութիւնք դարուց՝ չեն բաւական լուցնելու զայն, թէպէտե պէսպէս անուններ և մեկնութիւններ հնարեն : Հարստէն կ'անցնի արեգակնակերպն Քսերբսէս՝ Տարտանելի նեղուցէն՝ իւր աշխահախումբ նաւատորմզով, ինչպէս կ'անցնին երկուա ազգն ճագարաց և նապաստակաց՝ Պօսօձի կոկորդէն՝ ի վար . կ'անցնին անոր հետնակ բողոք Սոխ և Սրեելք՝ ողողելու համար զինուք և արեամբ զփոքրիկն Յուն աստան . սակայն անպարտելի քաջերու հարուածոցը ներքե կրկին և կրկին բեկեալ՝ յետս կ'ըն կրկին վաստաբար, մազապուր զերծեալ : կ'անցնին իշխանաց կղղիներու դիմացէն, յեց յանիւս բազգին և լատուափայտերու՝ հոռվմէական Արծիւն և աշխարհակալ Լէգէոններ, երթալու մրցելու Պոնտոսի մեծազօր իշխողին հետ . և Միլլա, Լոկովլոս և փառապանձն Պոմպէոս, ինչպէս յետոյ խաչանիչն կոստանդիանոս, կը փայլին

անոնց մէջ իրրե պատերազմական աստուածներ :  
 իսկ հայրն աստուածոց Արամազդ՝ ձիւնափայլ Ոլիմբ  
 պոսի անմատոյց բարձունքէն մերթ շանթեր կ'ար-  
 ձակէ , և մերթ ալ հաշտ ակամք կը կենայ 'ի զնին  
 ճակամուց : կը լուսի մէկ վայրկենէ ցմիւսն խաշա-  
 կրաց բացական զէնքերու և զրահից շկայիւնը .  
 կը տեսնուի Բէօյիւք-Ծէրէի գաշտին վերե կոփ-  
 ռետոսի բանակը . վահանները կը փայլվածն լուս-  
 նեկին մէջ , և ութղարեան ծառը կը մնայ և կը  
 հովանանայ գիւցազին գլխուն վերև 'ի յիշատակ  
 յափառենից , թէպէտե կոստանդիանոսի ձեռակեր-  
 ար կ'անցնի յազգէ յազգ :

Յեց յանիւս ժամանակաց կը թուիմ հոլովիլ և  
 ես , և լսել ահաւոր հրանօթից որոտումն և հեծելա-  
 զօրաց գոփիւնը՝ Պօլսոյ Ադ-Մէյտան հրապարակին  
 վրայ . կրակն և փոշին՝ ոսկիամպերու պէս 'ի վեր  
 կը ծառանան , և բիւրաւոր քաջերն՝ առիւծի և  
 վագրերու նման անել դառագիղներու մէջ պաշա-  
 րուած՝ հրոյ և սրոյ և անակնկալ մահուան դէմ կը  
 կոռուին յուսահատ : Ամենուրեք ահ և սարսափ բե-  
 րող Ենիշէրիներու կոտորածն է այս : Մէկ կողմէն  
 արհաւիրք վերահաս մահուան և մեծածոցն աղա-  
 զակներ՝ բոլոր պարխապները կը գղրդեցնեն . իսկ  
 միւս կողմանէ արիւնն ապաժոյժ՝ դիակացն ան-  
 կելոց՝ ընթանալով գետօրէն Ռսկեղներ և Մար-  
 մարայի մէջ կը խեզզուի : Ահաւոր կատարած՝  
 խեղճ ժողովրդեան տարապարտ արեամք և ընչիւք  
 յօրացելոց . զարմանալի՛ դործ , որով իրը և ոսկեղէն  
 տառիւք կը գրոշմին յաստեղս Սուլթան Մահ-  
 մուտի անունն և քաջութիւն , և կ . Պօլիս կը գեր-  
 անի իւր ճգնաժամէն :

Աստի կը լսեմ եկեղեցւոյ խօսնակ՝ Յովհ . Ոսկի-  
 բերան սուրբ Հայրապետի աւետարանաքարոզ



Ճայնը . կը տեսնեմ նորոյն Հերովդիաղայ , այսինքն  
է մոլենախանձ Եւդոքսիայ ոտից կաքաւը : Նա կը  
դիմէ յաքսոր՝ ի մեծն հեռաստան , և սա՝ ի դամ  
բան ահաւոր մահուան: Ահագնադղորդ Երկրաշարժ-  
ներ կը դղրգեն թագուհւոյն շիրիմն . անոր ան-  
խլիրտ դիսկը՝ կ'երերի մահուան մէջ անդամ , և կը  
կարօտէ քնոյ . իսկ մեծանուն Խոստովանողն Քրիս-  
տոսի կը դառնայ յետս յազթական փառքով , և  
կրկին նեղուցները կը լեցուին ծայրէ՝ ի ծայր նա-  
ւակներով և դրօշուք: Անդիէն կը թուիմ դիտել  
Մօտա-Փուռնուի ծովալճին մէջ , իբրև՝ ի ջինջ  
հայելով , վեց հարիւր վաթսուն և վեց Հայրապե-  
տաց ալեղարդ գէմքերն և լուսափայլ ակումբն , ո-  
րոնք ժողովուած են անդ՝ Եկեղեցւոյ ողբերը լոե-  
ցնելու և հաւատոց ստուերակողմանկը լուսաւորելու  
համար :

Սակայն , գու , լուսածագող Փարոս , որ Ջե-  
նեռ-Փաղձէի դիմաց ոռնակառեալ իբրև աստղ  
մեծապայծառ՝ բոլոր խաղաղական ծոցը կը լուսա-  
ւորես . ոհ , ամիտիէ պահ մի քու լոյսդ , չի ցուցնե-  
լու համար այն ողբերգական տեսարանը՝ որ ահա  
կը բացուի իմ աշքիս առջև: Ա՛խ , Էջ՝ ի գահէդ  
արծաթափայլ և գու լուսին . և մի տար լոյս անօրի-  
նին՝ միելու յեղեռն մեծ : Սակայն՝ ի զուր . Երկնից  
և յաւիտենական վճռոց ժամը կը հնչէ գիշերային  
լուսթեան մէջ , և Օգոստափառն Մօրիկ կը փախչի  
տագնապաւ՝ գէպ՝ ի Նիկոմիդիա: Հնդաթիւ ծի-  
րանածին և մարմնազանդ հրեշտակներ անոր չորս  
դին բոլորած են մակայլին մէջ . արծաթափայլ  
լուսինը կը շողաղողէ վէտ վէտ անոնց սրբափայլ ճա-  
կատներուն և ոսկեթել հերաց վրայ , և նորա ալտ-  
տութեան յուսովը՝ կը վարդին մահուան սահման-  
ներուն մէջ : Կը հասնին սև ստուերաց մէջէն ահա



մահու անողոք արբանեակները . բուիճակէն աւելի  
տխուր և օրհասարեր ձայն մի կը գոչէ 'ի բացուստ .  
« կացէք , կացէք . ապա թէ ոչ կամ նետ և կամ  
սուր է բաժին ձեր » : կը պաշարուին և կը բռնուին  
թշուառ կայսրն և իւր սիրասուն զաւակունքը .  
որոնց չորսին անմահ գլուխները՝ փոխանակ ադա-  
մանդեայ թագին՝ մահաբեր սրոյններքն կը դրոին  
կ'իյնան ընդ հուպ : կարգը կու գայ արքայական  
վերջին ճետին , Մորիկեան ազգատոհմի կենաց  
հանգուցին : ի զուր կը մատուցանէ տիրասէր  
դայեակն իւր միածին որդին՝ տիրոջն ազատելու  
համար . զի արդարասէր ինքնակալի աղեխարշ ա-  
զարկները՝ շուտով լրտեսներէն աւելի մատնուու  
կ'ըլլան իրին եղելութեան : Յառաջ կը մատուցուի  
վերջապէսնաև վերջին պայազատն արքայութեան՝  
անմեղ գառնուկի մի պէս : Վիրաւոր սրտիւ կը լսէ  
առաքինին Մօրիկ նաև անոր վերջին մնչինն և  
և տխուր հեծկլտանքը դահճի տապարին ներքն .  
Շամունէի պէս իւր աղեաց և հոգեհատորներու  
զոհերը կատարելէն յետոյ՝ իր պարանոյն ևս կը  
մատուցանէ արիաբար : Արիւնով անմեղաց կը  
ներկուի այն ծոցն , որ յառաջագոյն զուարծու-  
թեան վայր մ'էր արքայորդոց . գիշերոյ մթու-  
թեան հետ՝ սեւագոյն սպոյ քողն ևս կը համակէ  
զկ . Պօլիս . այսպէս կը սպայ նաև բացականն օշա-  
կան , որ մօտագոյնն էր անոր յօդիւ ծննդեան .  
անոնց եղերգական մահուան տխուր բօթը՝ կը  
խառնուի տիեզերական ողբանուադին հետ , և ուր  
ուրեմն կը գոցուի ահա մարդկային անդմութեան  
և բիւզանդական պատմութեան այս աղեխարշ  
տեսարանս ևս :

Եւ , զու , նորոցս ժամանակաց և Ասկղեպեայ  
ծնունդ , մեծդ Քեաթիակեան , արդեօք ազգակցիդ

յիշատակն աւելի նուիրական գործելու համար՝  
եկիր այսր նորոգելու հինաւուրց սգոյն տեսարա-  
նը , թէ առ Պլուտոն ունեցած ատելութեանդ և  
ընդդիմամարտութեան համար՝ զհէք մահկանա-  
ցուգ յանձնեցիր Նէպտունի : Ա՛հ , եթէ իցես Հո-  
գեպաշտ անց 'ի պարունկս երկնից . իսկ եթէ  
Նիւթապաշտ՝ էջ 'ի դաշտն սուրբ , ուր կը թափա-  
ռին բոցք փոսփորայինք՝ լուսաւորելու հողացեալ  
սկերաց՝ մոռացութեան խաւարը : - Բարէ , նո-  
րա խորհրդաւոր մահուան սև սոտւերն է այն և ոչ  
այլ ինչ , որ 'ի քթթել ական կը սուզի յատակս  
արծաթափայլ լճին , թողլով զիս խորազգած :

Բայց լո՛ւ , լուսին . զու՝ որ բոլորովին քաղցրու-  
թիւն ես և սէր կը չնչես կաթոգին , կը հանդուր-  
ժես տակաւին՝ առանց խաւարելու , յետ խաւա-  
րելոյ երկուց լուսաւորացս : Ո՛հ , եթէ չես խաւա-  
րիր , գէթ խաւարեցնուր անօրինաց շափներն և  
շառաւիղներ , ոյք անիրաւութեամբ կը բռնանան  
'ի վերայ երկրի . և թոյլ սուրբ գիշերոյ՝ թաղել զնո-  
սա 'ի յաւէժական մթութեան և մոռացութեան :

Սակայն ոչ . զի անշունչ արարածք անգամ իրենց  
համար սահմանուած հարկէն աւելի՝ ազատական  
մարդկութեան ստիպուած են արբանեկել երբեմն .  
ուստի նա ինքն ինչպէս սիրոյ՝ այսպէս ալ ատելու-  
թեան է առիթ . վասն զի ինչպէս ցամֆնականը՝  
ցամկականէն այսպէս ալ ատելութիւնն և նախանձ  
'ի տարապայման սիրոյ անստի կը ծնանին յաճախ .  
և ովկ է որ կը չնչէ զաղեցութիւնս այսր սիրոյ՝  
եթէ ոչ լուսին : Ախ , ցորչափ յաջորդեն գիշերք  
տունջեան և սերունդք սերնդոց . ցորչափ ելլէ և  
մոնէ լուսինը մեր մեղապարտ հորիզոններուն  
վրայ , այնչափ ալ մարդկութեան խորէն և ընկե-  
րութեան ծոցէն պիտի լսուին ողբանուագներ ան-

պակաս : Միով բանիւ՝ նա մարդկային եղերանց և ողբաձայն նուազաց մէջէն արիւնաներկ՝ և մարդկութիւնն ալ անոր ազօտաճաճանչ լուսովը պիտի յառաջեն միշտ՝ կենաց և մահու սահմաններուն վրայ : Ահաւասիկ բնութեան անփոխադրելի օրէնքըն . ահա ինքնիշխան մարդկութեան անխուսափելի հարկը :

Բայց ո՞րքան ողբոց և կարեկցութեան են արժանի սասորերկրեայ մուժ զնդաններու մէջ փակուած այն թշուառ արգելականներն , որոնք գիշեր և ցորեկ կը հառաջեն առ աստղն , կը հառաջեն անձկակարօտ և առլցմն լուսնելի . և սակայն աստղն և լուսին կը գտնուին միշտ հեռի և հեռի և ծածկեալ յաշացնոցա : Ո՞չ արգեօք նուազ չար է չունել տեսանելիս , քան թէ ունել և ոչ տեսանել զլյոս : Այո , աւելի երջանիկ է աշազուրկ խրուրդն՝ որ կը խարխափէ թափառական՝ ի սանդարամետական վայրը , քան կալանաւորն այն , որ կը չնչէ՝ ի վերայ երկրի , առանց լուսոյ : Խաւար է անոր համար ամէն բան , երբ յուսոյ պատրոյզն ևս շիջեալ է՝ ի սրտին . անդին և անփոխանակելի կենաց գանձն իսկ անտանելի է , եթէ պակասին հաւատք՝ ի հանդերձեան : Ա՛յս , բնութիւնը կը գոչէ մեծ բանաստեղծին հետ .

Wer heute sich nicht heben kann,  
Ist ewig ein verlorner Mann.

սակայն Հաւատքն և Յոյս , կրկին մխիթարիչք՝ թշուառ մարդկութեան , այլ ազգ կու տան ամենեին պատասխանի , թէ Համբերութիւնը՝ կեանք է և լաւագոյն կենաց առաջնորդ : Համբերէ ուրեմն , ով լքեալդ՝ ի մարդկանէ . Համբերէ տարագրեալդ՝ ի հայրենի տանէ . զի ամէն մարդ ալ ունի իւր յատուկ վիշտերն , և ով չի վշտակրիր՝ անձանօթ է

այնպիսին մարդկային սրտի . և ըստ քերթողահօրն Փլորենստացոյ՝ Հազար հաճոյք՝ չարժեն մի վիշտ : Այո , կը վշտակրին անոնք , որ ողբակից են քեզ , և անոնցմէ աւելի ոյք չգիտեն ողբալ զթըշուառ : Կը վշտակրի նոյն իսկ անվիշտ մանուկն անպարտական , չտանելով՝ ի խաւարի՝ զինքը դիեցնող ստինքը : Համբերութեամբ կակուզ կաթիւերն անգամ՝ կը կոփեն և կռանեն կարծրակուռ ժայռերն , և հազար և մի ձեռքով կը կերպաւորեն : Համբերութեամբ կը կազմուին բնութեան և այրերու մէջ բիւրապատիկ և անձեռագործ ապարաններ : Յարատեակն համբերութեամբ , այո , պիտի թաւալին նաև քու արգելանացդ կապարեայ ժամերն ու ամերն , և խզուին ժանգահար շղթաներդ :

Բայց ինձ հարկ է դառնալ գէպ՝ ի անցեալն հեռաւոր , գէպ՝ ի աւանդական հորիզոններն , ուսկից կու գան վիպական խուլ արձագանգներ : Եւ ահա կ'ելլեն՝ ի ծովէ նախապատմական Օաննեսք և Աննեդոտուք՝ ունելով ատամամբք զնուիրական մատեանս Քաղղեացւոց , և կը վերադառնան՝ ի ծով։ Կ'ելլէ կը կանգնի իւր պատ՝ ի պատ կոտաց մէջէն՝ զնուեալ հեթանոսն . և հնագոյն մագաղաթներու մէջէն կը լսեմ մարդկային աղդի պատմութեան ձայնը , որ կը գոչէ . Ա՛ռ , կարդա : Զի՞նչ – Եգիստոսի անդրանկածախ սատակումը , Բեթղեհէմի անմեղ մանկանց կոտորումը , Մուրթքէնանց և Մակարեանց վերայ կնքուած դատավճիւն և ողբածայն հառաջանքները մէկ կողմէն . իսկ միւս կողմէն ալ Տրոյիոյ և Հոռվիմայ հրդեհներն , ութսուն հազար Հոռվիմայեցւոց՝ ի Փոքրն Ասիա և Սիկիլեան երեկոյից կոտորածները . Պոմպէայի և Հերկուլենի հետակորոյս լինելն ընդ գետնի . Նինուէի , Բաբելոնի ,

և այլոց քաղաքաց առումն և այրեցաւեր կործանումը զիշերաժամուց մէջ՝ են իբրև մի մի ողբանուագներ, ոյք կը կազմեն տիեզերական պատմութեան և ցայդանուագի տիբրական մասունքը:

Սակայն այս խոհերուս մէջ ընկղմած ատեն՝ 'ի զուր կ'որոնեն աչք իմ՝ 'ի մժան գեշերոյ զմագաղթս. 'ի զուր և ձեռքերս կը փորձեն չօշափել զմերթս. զի նորին ձայնն՝ աւելի հզօր է և գրաւիչ քան զհինն: Եւ ստուգիւ կը լսեմ իշխանաց Մեծ կղղիէն կամ մանաւանդ գնալըէն որդիատեաց թագուհւոյն իրէնէի անմխիթար ողբն, որ իւր որդւոյն աչքերը խաւարեցներով ինքն ևս խաւարարգել բանտին և Նիկեփորի անդժութեան զոհ կը լինի: Ի զուր կը գոչէ բազմազարեան հեթանոսին և Սիբիլլայի գամբսնին և կրծոցը վրայ գըրուած այս մարգարէահրաշ արձանագրութինս, թէ « Ո՛վ, արեգակ, իրէնէի և կոստանդնի օրերը վերստին տեսնես զիս »: Բարէ, ճիշդ այս օրերուս մէջ կը բացուի այն շիրիմն, և հինաւուրց մեռեալը՝ կրկին կը տեսնէ արեւոն կենաւրեր լոյսը: Սակայն իրէնէի պէս որդիատեաց մարց և կոսդանդնի պէս մայրակորոյս որդւոց համար չի կայ լոյս, չի կայ օր. այլ չօշափելի խաւարն և մշտամհունչ ողբերն են և պիտի մնան անոնց բաժինը: Ուրիշ նուազեալ ձայն մ՝ ալտարբեր ողբանուագով կը լսուի ֆըզըլ-Ատայի համբաւատենչ արգելավամքէն (ուր միանգամ միայն այց ելլերով ընդ չօր և հոգեկցին իմոյ, գարձայ բազմապատիկ և անմոռանալի յիշատակներով), և այս ձայնս է առաքինակրօն վարդանայ և արեւելից Սպարապետին, որ քաջաց բանակով մի ճակատելով երբեմն խսկիւտարի դիմաց՝ դողացոյց Նիկեփորի պէս վատազգի՝ բայց անդութ բռնակալներ. իսկ այժմ՝ 'ի խաւարել երկուց լուսապայծառ աչացն՝

կը հաչէ և հառաչէ առ անաղօտ լոյսն երկնից: Ահ, հառաչէ և դու, ով սուրբ հայրապետդ իզնատիէ, այն փոքրիկ և բլրաձե կղղեկէն, որ Պրօտիփ դիմացը կեցած է և զուարթագին կը դիտէ զկապուտակ ծոցն Նիկոմիդիոյ և զնիկոմիդիա ինքնին փառապանծ: բայց քու աքսորանօքդ կարծես թէ ինքն ևս մրտամ և տիխուր՝ կ'ողբայ առ անցաւորս, կ'ողբայ առ այցելուս իւր: իսկ, դու մենացեալ, անմատոյց և անմարդաձայն ժայռդ Դէմոնիսեան: վիժածդ պլուտոնական խոր անդնդոց: ով, որ Մարմարայի ծոցաբերանէն վեր բարձրանալով՝ անյիշատակ ժամանակաց հետէ կը կոծիս և կը մրցիս միշտ յաղթական կատաղի ալեաց և փոթորիկներու դէմ, և զիշերային ուրուականներու նման երկնցուցած ևս ստուերներդ մինչ՝ 'ի բարձունս գալատա-թուշէի: Օ՞ն ցուցուր ինձ, ուր հանգչեցաւ և մնչեց անպատի տատրակն, անբիծ աղաւնին և հակող հոչվիւը՝ Ս. Ներսէս Պարթև. կամ ուր անհետացան արդեօք անոր վշտակիր օրերու՝ տիբրագին արձագանդները: Այլ լուռթիւնը միայն կը խօսի անբարբառ: Եւ անդունդն անյատակ, որուն վրայ արձանացած կը դիտէ նա զաստելու, ահաւոր յորդանաց հետ իմ ձայնս ևս կ'ընկղմէ իւր մէջ. և կը թուիմ լսել զողբս և զպայքար Սուրգակին Շիլլէրի: Անտուատ ապա վիշտապներ և նահանգգ ծովու զգայուելով և վերելակելով ընդ պտոյտս հոսանաց՝ չարաւէն աւելի՝ իրենց հրաշունչ խոշխոնովը կը փրփրացնեն զծովն խաղաղիկ, և փոսփորային ալեաց միջէն՝ անոնց հրացայտ աչքերն ևս աւելի փայլատակունս կ'արձակեն ահաբեկիչս:

իսկ ես խորհրդագլած լուռթեանս և ահեղ տեսլեաս միջէն զաչս՝ 'ի վեր ամբարձեալ՝ այլ ինչ կը թուիմ տեսնել՝ 'ի հեռուստ ահեղագոյն և անպա-

տումն։ ի՞նչ են, արդարեւ, այն հրեղէն գետերն՝  
որոնք թերայի և Ստամպօլի բարձրութիւններէն  
հոսելով զառ՝ ի վայր՝ կ'ընթանան, և այլեայլ  
առաջներու բաժնուելով՝ անհաւատալի արագու-  
թեամբ կ'ողողենքաղաքին և շինից ամբողջական թա-  
ղերը։ ի՞նչ է այն չիշախայգին նման արիւնաներկ լոյ-  
սըն, որ կայծակի արագութեամբ կը յառաջէ Մօտա-  
Պուռնուի հիւսիս-արևմտակողմէն, կը ծաւալի  
խաւարամած երկնից երեսն, և բոլոր ծոցն իրեւ  
արիւնով ներկած է. — ի՞նչ են այն շանթացեալ  
նետերն և կայծակոնքը, ոյք մերթ խտացած օդը  
պատուելով՝ մեծ շառաչիւնով մահկանացուաց բնա-  
կարաններուն վրայ կը թօթափին, և մերթ թոռ-  
ցիկ աստեղաց հանդոյն օդոյ մէջ կը թեապարեն, և  
լուսաւոր մթնոլորտէն յանկարծ մթագին հորիզոն-  
ներու մէջ գահակիթելով՝ ահագին աղէտներ անտի  
կը ծնանին. — ի՞նչ է այն բօթաբեր և տիսուր ձայնը,  
որ խոր քնոյ մէջ ընկղմած մահկանացուներն առ-  
հասարակ ի վեր կ'ընդուստուցանէ՝ ասելով. Եանդըն  
վար. և՝ ի վայրկեան ժամանակի ամէն աղէտ առաջի  
աշաց նկարել կու տայ. Աւազ, այս է մարդկու-  
թեան հաջուածներէն զարհուրագինը, գիշերոյ  
անսովոր հրախաղութիւնն և կ. Փօլիսը լափող  
չրդեհն. որ բազմագանձ լնտանիքները՝ մէկ ժամ-  
ուան մէջ մոխրի վրայ կը նստեցնէ, և երջանիկն՝  
ապերջանիկ կ'ընէ. Բարէ, կոչողի ձայնին և հրեղէն  
նշանին հետ՝ ամէն աշխարհ հօն կը դիմեն՝ քոնը  
գլուխնին։ Աւազեի ազգաբնակութիւն. որոյ քոնն  
անդամ չէ ապահով։ Կատաղի բոցը՝ պատուհան-  
ներէն գուրս վազելով՝ վիշապաձայն կը շէ, դիմաց  
ելլողները կը լափէ, և որեկիցէ զաղանէ մաւելի  
անողոք է և անյագ։ Մերթ կ'ընթանայ՝ ներքնուղի-  
ներու միջէն, սողոսկելով, և մերթ դէպ ՚ի վեր կը

բարձրանայ՝ գալարելով և տատանելով յաջ և յա-  
հեակ իւր տուտը. Այն աներկոյթ ճակատամարտն՝  
որ կը բացուի օդոյ ջերմացեալ և ցուրտ խաւերուն  
մէջ. այն լոյծ տարերաց իրարու հետ բաղխին և  
կուռելը՝ նոր օրինակ հով մի յառաջ կը բերեն և  
ահեղ սօսաւիւն, որը մահկանացուաց սրաերը կ'ա-  
հաբեկեն։ Անոնց բաղխիւնէն այնպէս դիւրաւ կը  
տապալին, մզկիթներու և բաղնեաց հոյակապ գըմ-  
բէթներն, ինչպէս նաև ապարանից և փայտակերտ  
տուներու տանիքն՝ ահեղ գորդմամբ։ Հաստաբեստ  
սիւներն և գերանները՝ կը ճարճատին՝ ՚ի քիթթել  
ական, և կերոններու նման կը բորբոքին՝ ՚ի բոց՝  
կարծես թէ Մամմինի և Ուրանոսի ապարանքը  
լուսաւորելու համար։ Բորբոքած է նաև բոլոր շրջա-  
կայ մթնոլորտը գժոխոց կաթսայի մը պէս. և օդն  
ինքնին աւելի նշարգելութիւն և մահ՝ քան թէ  
կենաց շունչ կը պատճառէ։ Սանդարամետական  
ծուխը՝ սկադէմ սատանաներու պէս կրակի լուսոց  
միջէն ահուելի կերպարանօք վեր կը ժայթքէ՝  
պտոյտկելով։ Վերահաս երկիւղէն խելագարեալ  
կանաց և մանկանց աղաղակն և ճիշերը, որոնք  
շատ անդամ կրակի ձեռքէն փախչելու տեղ՝ հեր-  
արձակ դէպ ՚ի կրակը կը դիմեն, քարացեալ  
սրաերն անդամ կը կեղեքեն, և աննկարագրելի են։  
Այն բաբելոնական հնոցաց շիկակարմիք հրոյ միջէն՝  
կը պահան մերթ ընդ մերթ, մարդասիրութեան  
հզօր թեերով, Ազարեաններն աղատող բարերար  
հոգիներ. սակայն մարդկային աղէտներէն իսկ  
օգուտ քաղող անդութ հրէշներ ևս պակաս չեն. ու  
սոսւերաց մէջ, ոյք կրակէն խնայած գոյքերն՝  
անխնայ կերպով յաւարի կ'ասնուն։ ի զուր գթու-  
թեան հետ ջրեղէն տարըն ևս ձեռք ձեռքի տուած՝  
համաճարակ հրոյ դէմ կը կոռուին. վասն զի նա իւր

աւարին հետ մարդկային դոհեր ևս պիտի ընէ անպաշկաս։ Այս, բիւր անգամ մոխրի և աւերակացներքե թաղեցնա զհինաւուրցն Բիւզանդիոն։ և սակայն Բիւզանդիոն՝ փիւնիկ հաւու նման կարաց դարձեալ այն մոխրակոյտերու տակէն վերականգնիլ՝ աւելի գեղեցիկ և պերճ։ Ո՛վ, մեծապանծ քաղաքն որչափ աւելի գեռ մեծ և փարթամ, որչափ Երջանիկ և նախանձելի պիտի լինէիր բազմաց, եթէ քաղաքակը թութեան և յառաջադիմութեան ջանքերն յաջողէին աղետիցդ վերջ տուող միջոցներ հնարել։ Սակայն դու, չեղինէդ գեղանի՝ դշխոյից ծովուց, լուցո՞ք գիշերային ողբերգ, և որբէ զաշող լուսագեղ և փարփառ. վասն զիքիչ ատենէն պիտի ծագիքել նոր արշալցոյս և նոր արև կենցազոյ։

Գառնալով գէպ յարեելս հարաւոյ, կը տեսնեմ Մալ-Թեկիէի գիմաց ծովուն մէջ խարսխեալ Երկնաբերձ սիւն մի, և այն սեանը վրայ ալ զարմացման և երկիւզի առարկայն։ Ոչ փարոս մ'է այն լուսատու, ոչ քարեղէն արձան, և ոչ ալ սին ստուեր մի. ոչ. այլ է մին այն մահկանացուներէն, որոնք ոչ քուն ունին և ոչ հանգիստ. և ապրիլ կարենալու համար՝ բիւր վտանգներ և բիւրապատիկ մահունս աչք առած են։ Ընդարձակ շրջանակի մի պէս կը պատեն զայն ամենուատ ցանցապատնէցք և Մառեաներ, որոնց մէջ կը ննջեն և կը խորդան տաժանեալ և անձեւ իրաններ՝ քան թէ կենդանի մարդկի։ Սակայն նա ոչ կը ննջէ և ոչ այլ կը շարժի յաջ կամ յահեակ. այլ կատարեալ արձան մ'է՝ արձանացեալ Պոսիդոնի հանգոյն՝ ի վերայ անհաստատ ծովուն, և երկժաննին՝ ի ձեռս իւր, գուպարելու լնդ վիշապազոնս անդնդոց։ Բոլոր անոր շոնէն և ուշագրութիւնն՝ աչքերու մէջ կենտրոնացած են, և աչքերն՝ ի խորս ջուրց, որոն մէջ կը տեսնէ զուսին։

և լուսնի լուսով կ'որոնէ իւր ահագնացայտ ախոյ յեանը։ կ'անցնին ժամեր, կ'անցնին շոգենաւեր, կ'անցնին նաև բոցեղէն չոնչանունք շինելափառ ասուպներու. կ'անցնին լղձք և ցնորք բիւրակերպեանք. կ'անցնին թշուառութիւնք և վայելք, իրենց զուարթ և տխուր երեսյթներով, և կը լուսի անծանօթին ձայնը. գնամ, գնամ : Բայց նա չի փոխեր ամենեն իւր գիրքն. այլ պշուցեալ կը հայի բնութեան համատարած հայելին, ուր գրուած և գրուած կը տեսնէ բոլոր իւր բաղդն և աշխատութեան վարձքը։ Համբերութիւնը կեանք է և ամէն դժուարութեանց չքնար յազմանակի : Վերջապէս կը շարժին ալիքներ, և հետ զհետէ կ'ընդարձակուին. կը շարժի այն սիւնածեան խարիսխը, որուն վրայ նա կեցած է. կը շարժի և հայելանման ծովը : Կու գայ կ'երեկի ահա մին՝ ի քաջաց՝ դարանակալ իշխանութեան Ովկիանու, վիշապն ահազի, թեապարելովք քան թէ գաղտագողի ընդ ամեհի ալիսն. և համասեռ լուզակաց պարք կ'ընկերեն նմա : Խոյս տալով անոր երեսէն, կը փախչին ձկուք, և պողիապողք, կակզամիսք և խեցեմորթք առ հասարակ. և նա կը մտնէ յազմական, քան թէ պարտեալ ցանցապատնէշին մէջ. և կը մտնէ՝ յաւիտեանս անկէց չելլերու համար : Դիտի նշանին հետ՝ անդէն և անդ կը փակուի ծովուց իշխողին յազմական մուտքն, և փախստեան համար բնաւելք չի կայ. կ'իմանայ բոնակալն այն՝ եղածն և բլալիքն, և այլայլմէ եղած՝ կատաղաբար կը սուրայ ամէն կողմ։ Սակայն՝ ի զուր. վասնզի ուր կը պակիս ի խնասութիւն և հանձար, անջօր է ոյժն և բոնութիւն։ Մեծաձայն աղաղակներով կը քարշեն որսորդք զգործիս. և ցանցապատնիշաց հետ՝ անազատին աղաղապութեան սահմաններն ևս քան զմս կ'ամ փոփուին։ կը սկսի ահեղ մենամարտութիւնն, և

բազումք՝ կը կառւին միոյն դէմ. այն ինքն է հսկայաձեն թուն։ Մէն մի հարուած առած ժամանակ, խուլ մոնշիւններ կը հանէ ու կը բոհրոխէ։ Սնորտառնի մէկ բախիւնէն մեծամեծ մասնաներն անդամ ծովուն խորը կը թաւալին . և զգայուելուն պէս՝ ահագին յորձանքներ կը յարուցանէ առեսեղ, և հոսանքներ կը ժայթքեցնէ յերկինս՝ ի վեր։ Եւ գիշերային սատուերախառն լուսոյ մէջ՝ այնքան ահաւոր է այն, որչափ զօրաւոր՝ 'ի ժամ մահուն։ Կարծես թէ թայտնութեան վիշապն եկած է անդ, և իւր տառնով երկնակամարէն աստեղաց մասն մի յերկիր պիտի դահավիմէ։ Սակայն մարդը հօս ևս կ'ելլէ յաղթական, և նա գերի է 'ի ձեռս յաղթողին։ Սյապէս եղած է և պետի լինի մարդկութեան կոխն և յաղթութիւնը դժուարութեա՛ց գէմ։ Սակայն ինչպէս մարդուն ձեռքն է յամենեսին, այսպէս ալ ամենայն արարածոց ձեռքերը պիտի գուպարին մարդկանց գէմ։

Եւ յիշրաւի, ուղղելով անտի աչքերս գիշերագնաց շոգենաւուց և շոգեկառաց անթիւ և անծայր գծերուն վիսյ յաջ և յահեակ, կը տեսնեմ աւաղելի ընդհարումներ։ կը լսեմ ողբաձայն աղաղակներ թշուառ մարդկութեան 'ի ծովու և 'ի ցամաքի։ կը լսեմ և կը աեսնեմ սիրոյ և ատելութեան ահաւոր դրամաներ, որանք կը կատարուին մերթ 'ի քուն և մերթ յարթնութեան գիշերաժամուց . և կը կատարուին ամէն ժամ, ամէն վայրկեան և աշխարհիս ամէն կողմերը։ կը լսուին բիւրապատիկ հիւանդութեանց և ցաւոց մէջ հաշող և մաշող հիւանդաց ախուր հառաջնքներն և սրտմաշուքն, որոնք գիշերոյ ազդեցութեան ներքեւ աւելի ևս կը սաստկանան։ վերջապէս կը լսուին պատերազմական դաշտերս վրայ կարեվէր անկող թշուառ բազմութեան խուլ մոնշիւնն

և հեծեծանկին, որոնք զուրկ են բոլորովին մարդկային միսիթարութենէ և կարօտք օգնութեան. գիշերը միայն է նոցա օգնական, բայց ոչ միսիթարիչ։ Բարէ, որչափ խորհիմ ես, այնչափ ալ խոկութի և գիշերը կը վարեն զիս անդր քան զանդր՝ գահավիթելու մարդկային թշուառութեանց և բիւրապատիկ աղետից անդունդներուն մէջ։ Սակայն ես ոտնակառեալ 'ի բերան վիհին և հեղեղատին՝ ուսկից թաւալզլոր կը հոսին և կ'երթան կեանք մարդկան՝ հազար և մի ողբանուադներով. մանաւանդ թէ անկեանները կարեկցարար արտասուելով՝ յայլ ինչ կ'ուղղեմ իմ ընթացքս ընդ մութ գիշերի, անոր միւս գաղտնիքն և ազդեցութիւններն ևս հետազօտելու համար։ Եւ գուք, լուսին և աստեղք լուսափայլք, որ կը փայլիք 'ի վեր անտրտում և անցաւ, օն առաջնորդեցէք իմ քայլերուս դէպ 'ի խորն և անհետազօտելին, գէպ 'ի բարձրն և անելաննեին։

Ինչպէս ձայնն՝ է այն աղղեցիկ և հզօրներգործիչն որով մեր սրտերը կը շարժին յանկարծ յուրախութիւն կամ՝ 'ի լաց. այսպէս ալ լրյոն՝ է այն թափանցիկ և միակ միջնորդն, որով մեր աչքերը կը տեսնեն զմարմինս և մարմնոց որակութիւններն. որով նորանոր յարաբերութիւններ կը հաստատուին ընդմէջ ծանօթին և անծանօթից, ընդ մէջ տեսանողին և անտեսից։ Եւ սակայն ինչպէս չի զարմանամ՝ երբ կը տեսնեմ, որ որքան լոյսը կը նուազի մեր հորիզոններու վրայէն՝ այնքան աւելի աշխարհներ տեսանելի կ'ըլլան անհուն անջրպետութեան մէջ, զոր մեծանունն նեւտոն կոչեց գործարան կամ ուղեղ աստուածային. և որչափ գիշերն և խաւարը կ'աճին, այնչափ ալ անհուն միջոցաց հեռաւորութիւնը հետ զհետէ կը նուազի և կ'անձկանայ, և երկնից անհաս բարձրութիւնն և հաստատութիւնը՝ երկրիս հետ

կու գայ կը կցորդի։ իսկ բացական արարածոց՝  
մերձաւոր յարաբերութեանց համեմատ՝ անոնց  
իրարու վրայ ունեցած զարմանալի ազդեցութիւնն  
ևս կը բազմապատկին։

Այս՝ 'ի վեր ամբարձեալ զառածս մոտաց և հետազոտող աշացու՝ կը տեսնեմ անպատրուակ, որ գիշերամբանու և խաւարի ազդեցութեան ներքեանականն անդամ՝ բնականին հետ ձեռք ձեռքի կու տան և տուին իսկ՝ այնքան կրօնական, բարոյական, գիտական և նիւթական յեղափոխութիւններ յառաջ բերելու համար, մարդկային ազգի պատմութեան մէջ. ուր յիմարութիւնն՝ ընդ իմաստութեան, չարը՝ բարւոյն և վասասակարն՝ օգտակարին հետ 'ի գիր արձանացած և 'ի կոթողս կանգնուած կը տեսնուին։ Գիշերամբանուց ազդեցութեամբը փոխեց մարդկութիւնն՝ երկնային կրօնքը՝ բնապաշտութեան հետ, և միաստուածութիւնն՝ ընդ բազմաստուածութեան։ Սակայն բաւական չէր միաւորը բազմացնելն, այլ հարկ էր, որ անմարմինն ևս մարմնացնէր և աներեսցին՝ երևելապէս անձնաւորէր. զի ինքն ևս մարմնաւոր է։ Բաւական չէր անձնաւորէլն, այլ հարկ էր, որ անմառոյցն՝ իրեն ևս քան զես մերձեցնէր, վասն զի կարօտ էր անոր. և այն ժամանակնա կարող եղաւ մերձեցնել երբ արեգական լոյսը հեռացաւ անկէ, և իմանալի լոյսն՝ աւելի մօտեցաւ երկնից լուսաւորներուն։ Այս՝ այս խորհրդապատճ ժամանս նայեցաւ բազմադարեան հեթանոսիկն՝ երկնից կամարին վրայ վուսինն սիրանոյշ, և կոչեց զայն Անահիտա. այս ինչն է մայր կամ ծնող ենթալուսնեաց, պէս պէս առասպելաբանութեամբք. Դիտեց յերկինս զԱրուանեակն լուսապայծառ, և անոր գեղովն յափշտակուած՝ անուանեց զայն Աստարտէս = Ափրոդիտէս

= Աստղիկ, այսինքն է անձնաւորութիւն սիրոյ, զոր ունէր առ զգալին, առ մարմինը։ Գիշերոյ ահարեկիչ երազներէն և արհաւիրներէն նեղուածժամնակամիջոցին՝ դարձոյց աչքը երազաթռիչ աստղին՝ չըրափի վրայ, որ կը վանէր զգիշերն և կը գծէր զժամս նորին. անդէն և անդ կոչեց զայն իրեն օգնութեան, ձայնելով ներու կամ ջիւր. այս ինքն է արագահաս մեկնիչ երազոց, և երազագիր դպիր երկնից կամարին։ Մնալով ընդ երկար գիշերոյ մթութեան մէջ կամ 'ի տարակուսանս յեղյեղուկ բազգին և բաշխից, ուրիշ մոլորակ մ'ալ անուանեց Ապոլոն, այսինքն է պատգամատու կամ յայտնող անյայտին։ Դիտեց 'ի խաւարի զանցս և զանկումն թռուցիկ աստեղաց, և անդէն հնարեց զիոխանցումն մարդկային հոգւոց՝ պարունակաց 'ի պարունակու։ Համառօտ ըսելով, այսպէս ուրեմն կազմեցաւ հին ազգաց գիշաբանութիւնն. այսպէս փոփոխեցան նաև կրօն՝ առաջին անդամ։ Սակայն «Որ էնն» յայտնութեան, «Նուր փուր նուրին» եգիպտացոց և Անորուա-Մազուան արխական ազգաց մնացին միշտ իրեւ յայտարար՝ անմարմին, աներեւոյթ և անստեղծ էին, որ է միակ հաստիչ և հայր աստուածոց և արարիչ գիշերոյ և տունչեան։

Ժամը տասներկու կը հնչէ. և 'ի հնչեն կը տեսնեմ՝ ահակը յառաջէ լուսնի լուսայն և ստուերաց միջէն հսկայ մի մեծ և փառապահծ. որուն ուրերն՝ երկիրս կը կոխեն, և զրուխն՝ յաստեղս կը պակուի։ Եւ ով արդեք իցէ այն։ Է ոգին գարուց և ժամանակաց, որ կը հիւսէ և կը թուէ զդարս և զժամնակու։ է նոյն ինքն մարդկեղէն հանձնարն, որ կանգնելով յաւիտենական հսկայի մի պէս ընդ մէջ երկնից և երկրի՝ կը դիտէ անքթիթ անոնց յեղափոխութիւններն և շրջանը։ Ծանր խաւարը, կը ձկտի

Եբրկ շղթայիւ կապել անոր աչքերը, բայց նա հետ  
զհետէ Հերշէլեան հեռագէտ գործիներ հնարելով՝  
կը յարմարցնէ իւր տեսութեանը: Կարկառք աստի և  
կարկառք անտի, և լերինք անանցանելի դժուա-  
րութեանց միշտ նորանոր կ'ելլեն անոր դիմաց.  
բայց նա միշտ յաղթական կ'երթայ այդ բարձրա-  
բերձ շղթաներու վրայէն, ինչպէս ալպեանց ուղեուրը՝  
Դիւրի կամոքքէն: Աստի խորանդունդ վիճեր և  
գահավէմներ կը բացուին ոտիցն առջև. անտի  
բոմբիւնք սպառնացող վիմաց, որոնք հորովելով կը  
թօթափին իւր գլխուն վրայ: Մէկ կողմէն գոչիւն  
և բարբառ ահադին գազանաց. իսկ միւս կողմէն ալ  
արձագանք լերանց և քարանձաւաց՝ կու գան զար-  
հուրեցնելու զնա և յեսու կեցնելու իւր ընթացքէն.  
սակայն նա կը յառաջէ աներկիւդ: ի բաղիսիւն  
չարաւոյ, կամ հիւսիսային հողմոց՝ կ'իյնան կը  
կործանին, հեծեծելով, հաստաբուն կաղնիներ և  
հինորեայ մայրք՝ անոր աչաց առջև. իսկ նա աներ-  
կիւդ և անսասան ամէն բռնութեանց դէմ կը դնէ,  
և կը դիմէ միշտ յաջ և յառաջ: կրանիսեայ կարծ-  
րակուռ ժայռերն, որոնք յաւիտենական կոթողնե-  
րու նման վեր բարձրանալով, կարծես, թէ երկնա-  
գունդն իսկ իրենց վրայ կրելու բաւական են, ջերմ  
և խոնաւական տարերաց ազդեցութեան ներքեւ կը  
լուծուին և կը հոսին՝ ի վայր. և հեղեղք ջրոց՝ կը  
վարեն և կ'աման զանոնք՝ ի ծով. իսկ նա անտեղի-  
տալի և անլուծանելի կայ և կը տոկայ ամէն բնա-  
կան զօրութեանց առջև: Հուր և ջուր, սուր և սով  
զինուած են և կը կոռուին անոր դէմ. բայց նա  
յաղթող հանդիսանալով յամենայնի, անդը քան  
զանդը կը յառաջէ իւր հերակլեան քայլերը: իստի,  
պայքար և մրցութիւն են անոր անհրաժեշտ նշա-  
նաբանքը. իսկ նպատակը՝ խաղաղութիւն, լուսաւո-

րութիւն և սէր: Նեւոն, Հերշէլ, Արագոյ, Լապ-  
լաս, Սէկկի, Աքեազպարէլլի և ուրիշ մեծամեծ  
գիտնականներ՝ իրեւ մի մի լուսափայլ աստղեր են  
Աստեղագիտութեան հորիզոնին վրայ, կամ լաւ և  
ալիքներ՝ մարդկութեան լայնածաւալ ծովուն մէջ, և  
ինչպէս յանցելումն և ներկայումն՝ այսպէս ալ ա-  
պագայ. դարուց հոսանքին հետ պիտի գան և  
անցնին նման գեռ շատ և շատ ալիքներ, մակըն-  
թացութեան և տեղատուութեան կենդանացուցիչ  
օրինաց համակերպելով. և սակայն հանճարը տի-  
րած է և պիտի տիրէ ու տիրապետէ միշտ այդ  
մրրկածուփ ծովուն և անոր յարածուն ալիքնե-  
րուն վրայ. և պիտի յուղէ կենդանացնէ զայն  
երբ մեռած է, և խաղաղէ՝ երբ սաստիկ յուղեալէ: Եւ  
վայ անոր, որ զանի կ'անդունէ և կամ անոր փըր-  
կաւէտ յառաջխաղացութեանը դէմ կամաւոր ար-  
գելքներ կը յարուցանէ. վասնզինա իրեն մրցակից  
ունի յաջորդ դարերն և սերունդք, որոնք միշտ  
յաղթող, քան թէ յաղթեալ հանդիսացած են և  
պիտի հանդիսանան յաւէտ: Անոր տրուած է փա-  
րատել տգիտութեան խաւարը, հարուածել աւե-  
լորդապաշտութիւններն և դարուց խժդժութիւն-  
ները, և գամ քան զգամ ընդարձակել անծայրա-  
ծիր գիտութեանց սահմանները: Անոր անցած  
անդերէն կը խօսին, նոյն իսկ գիշերոյ մժութեան  
մէջ, Հեռագրութեան անխօս թելերն և Զայնախօս  
դործին. կը խօսին ազգաց և աշխարհաց քաղա-  
քակը թութեանը վրայ յառաջ բերած հրաշալի  
յեղափոխութիւններն և գիւտերը:

Այո՛, նա է որ կը չափէ անսահման և անշափա-  
կան միջոցն եռանկիւնաշափութեամբ. կը զննէ  
ուշի ուշով անոր մէջ շրջող և շոնչող լուսաւորքն,  
անոնց որպիսութիւնքն, անյեղլի օրէնքներն և

յաւիտենական ընթացքը։ Կեդրոնաց կեդրոնը՝  
որ է անչափապէս մեծ և անհնապէս հեռի՝ ի մէնջ.  
որ կը շարժէ բոլոր արեգակներն և ինքն հրեշտա-  
կաց ձեռքով միայն կարէ շարժիլ, թէ և անտեսա-  
նելի մնաց անոր աչքերէն՝ բայց ոչ նոյնպէս և ՚ի  
մտացն։ Եւ իբր անմիջական արդասիք գիշերաժա-  
մու գիւցազինա՝ որուն աչքերն յառեալ կան յար-  
փիաւորս և բիւր արփիք կը բորբոքին յաչս նորա,  
ահա ՚ի շղթայաշար ընթացս դարուց կը ձգուին  
նաև երկնից հաստատութեան վրայ անբաւ գիծեր  
և շաւիղներ՝ դէպ ՚ի ծիր կաթինը։ Կը կաղմնուին  
բազմակերպեան չամաստեղորդիշնեներ. միով բա-  
նիւ կը կաղմուի Եղիպտացւոց, Քաղղէացւոց, Արա-  
բացւոց և այժմու Աստեղաբաշխութիւնն, որուն  
զուգակից է և Մոգութիւնը, եթէ ոչ կլսովին  
ծնունդ։

Այս, գիշերներու ազգեցութեան ներքն ծնան  
և բարգաւաճեցան հնագարեան ժողովրդոց մէջ  
այն երազներն և երազապատում վիպասանու-  
թիւնները. այն խորհրդազգած տեսիներն և  
յայտնութիւնները։ Գիշերոյ ծնունդ են այն ու-  
րուականներու և վհուկներու մասին յօրինուած ժո-  
ղովրդական աւանդութիւններն և զրոյցքը։ Գի-  
շերներն յզացան և ծնան մարդկային մտաց մէջ  
զՄոգութիւն և զբաւգէութիւն. աստեղահմայու-  
թիւնն և բազդին և բաշխին ընծայուած պատմու-  
թիւններն, որոնցմով Արևելքն՝ աւելի քան արե-  
մուտք, հին աշխարհը՝ քան թէ նորը ճոխ է և բազ-  
մադրուագ։

Յիշաւի գիշերային մթութեան մէջ կ՚իյնայ  
հայրն ազգաց Արբահամ՝ խոր թմրութեան և յա-  
փշտակութեան մէջ. և իւր ապադայ սերնդոց բազ-  
մութիւնը գեռ չի ծնած. երկնից աստղերուն վրայ

գրուած կը կարդայ: Գիշերոյ ասուերաց և անըր-  
ջոց մէջ կը զօրանայ Յակիրվ նահապետը մենա-  
մարտելու ընդ յաւիտենական հսկային և պարտել  
իսկ գլխովին։ Յավսէփ գեղեցկին և իւր եղբարց  
չքնաղ պատմութեան հետ՝ բոլոր եղիպտոսի և  
շրջակայ աշխարհաց բաղդն իսկ՝ գիշերաժամու-  
երազոց և մթութեան մէջ կը կնծոյին և կը  
լուծուին։ Գիշերաժամուց ազգեցութեան ներքե  
փարաւոն արքայն յանկարծ ինք զինքը Նեղոսի  
ափանց վրայ տեղափոխուած կը տեսնէ, ինչպէս  
հեռաւոր ապագան ալ՝ ՚ի մերձագոյն կէտն մի ժա-  
մուց գիշերոյ։ Գիշերային ստուերաց միջէն կը  
տեսնէ Բաղդասար՝ վճռաբեր հրեշտակի թաթն, և  
կը կարդայ իւր մահուան և Բարբիոնի կործանման  
այս ահաւոր վճիռա. «Մանէ, թեկէդ, փարէզ»։  
Գիշերային անընդոց և աստեղաց լուսոյն մէջ կը տես-  
նէ Արտաւան Դ կնքուած իւր և պարթեական  
հարստութեան անկանգնելի անկումը։ Ա՞հ, գիշե-  
րոյ խորերէն բազմաշաւիլ ուղիներ կը ձգուին  
դէպ ՚ի երևակերպութեան և բանաստեղծութեան  
անհաս բարձունքն, և Պատմասոսի Մուսայից եր-  
գերու մեծագոյն մասն իսկ՝ գիշերաժամու ներշն-  
չութիւններ են։

Այս, պատմական աշխարհէն՝ երևակայութեան  
սահմաններու մէջ թեսակոխելով, կը տեսնեմ ակն-  
երե արշալուսի նման լուսասփիւո հորիզոն մի,  
որուն միջէն կը յառաջէ հովէն աւելի արագըն-  
թաց և Պեղասոսի թեսերուն վրայ հեծած շիկա-  
կարմիր և գանգրահէր պատանի մի, մշտագալար  
դափնեայ պսական արտախուրեալ։ Անոր աջ և  
ձախ կողմէն կ՚ընթանան պսակազարդ Մուսայից  
պարք. իսկ յառաջ՝ հսկայից ջոկք, և ետեէն ալ  
գաճաճներու բազմութիւն մի. որոնք որչափ կը

ճգնին յառաջել՝ այնչափ ալ ետև կը մնան։ Անշուշտ պիտի հարցնես, ընթերցող, թէ ով է արդեօք պատանիդ այդ սիրաշատ, և թէ ուր կը դիմէ 'ի մժան գիշերոյ։ Ե՛նա գիշերոյ ծնունդը, տուրն ջեան և լուսոյ որդին, մարդկութեան արփուն և զուարթուն հասակն և բանաստեղծութեան անձնաւորութիւնը։ Կու գայ երգել զլուսինն և աստեղազարդ երկնքը. կու գայ լուսաւորել գիշերոյ ստուերքըն և ընդհատել զլուսութիւն։ Անոր կտրած անցած անապասներն և ապառաժները վարդ եշուշան կը վթթեցնեն ահա. իսկ ծաղկազուարծ հովիտներն՝ ամայութիւն, աւերակ, հուր և ծուխ։ Այսպէս անմատոյց բարձրութիւններն ալ անոր ընթացիցը վրայ խորանդունդ վիճերու կը փոխուին։ Այո, լունաստեղծութեան քնարն ևս հանդոյն սիրոյ՝ գիշերային լուսութեան մէջ լարուեցաւ և հնչեց զառաջինն և պիտի հնչէ ցվերջ աշխարհի։ Անտի անցաւ 'ի վրանս հովուաց և երկրագործաց անդաստաններուն մէջ. ծաղկազարդ հովիտներէն՝ բարձրացաւ 'ի բլուրս և 'ի լեռս, և 'ի լեռանց բարձանց՝ իջաւ պատերազմական դաշտերուն վրայ. հուր և բոց սփուեց ազգաց և ազնանց մեռած սրտերու մէջ, և ընթարմացած մարդկութեան երակաց մէջ արիւն և աւիւն քալեցուց։ Ներշնչեց արութիւն քաջութեան. սրեց զզէնս և զեռանդն պատերազմողի. խզեց գերութեան զլթաները. հանեց մեծ և անուանի դիւցազուններ, և 'ի ձայն հոմերական կամ ժողովրդական դիւցազներութեանց փոխագրեց զեղուանդներէն, որոնք ասկաւորեայ կենաց հետ՝ անմահունակ հոգիդ իսկ կարող են դիւրաւ թակարթել. մանաւանդ թէ քոյ կեանքը կ'առնուն և իրենց մահը քեզ կու տան բաժին։ Եւ այնուհետեւ ուրախութեան բաժակդ՝ շուտով փոխեցի 'ի թոյն դառնութեան, և ծաղիկ հասակը քեզի ալ ուրիշ բան չպիտի պաղաթերէ՝ բայց եթէ խոցոտիչ փոշեր և տատասկներ։ Կը տեսնես արդեօք հոգւոյդ ('ի բնէ հաւատացեալ) դիմացը

յելել իսկ կարծեցին։ Միով բանիւ, ազգաց աւանդութիւններն և այլքանական վէպերը՝ լի են և հոծ արարուածներով, ուսկից քաջ կը տեսնուի գիշերոյ չքնաղ ազգեցութիւնը՝ բանաստեղծութեան վրայ, ինչպէս փոխադարձաբար բանաստեղծութեան ստեղծագործութիւններն ալ գիշերոյ լուսութեան մէջ։ Ես կը լուեմ, թող խօսին այն ուրուականներն, ստուերներն և վհուկները, որոնք թատրերգութեանց մէջ վսեմագոյն տեսնիններն են, և գիշերը միայն ներշնչեց մարդկան հանել զանոնք թատերաբեմին վրայ։

իսկ գու բանաւոր ծաղիկդ մարդկութեան, ժի՞ր պատանի, որ կենաց բաժակաւը պատարոն՝ բանաստեղծութեան հետ թե թե տուած՝ կը յառաջես կեցաղոյս ծաղկազուարծ հովիտներէն դէպ 'ի դժուարակոխ բարձունս երկնաչու ասպարիզիդ. որ ընդոտուցեալ ընդ բիւր գահավէժս և խորխորատս վտանգաց՝ ընտանի յարկէն կամ շնչական կեանքէն կը հոսես ինք զինքդ 'ի յորձանս քաղաքաժողով ընկերութեան մարդկան և բիւրազգի յարաբերութեանց նոցին, վախցի՛ր գիշերոյ երկայնեալ ստուերներէն և ստուերաց մէջ դարանեալ մարդասպաններէն աւելի, Բաբելոնի այն մարմնասէր դատերաց լուսածագող կանթեղներէն և երաժշտական նուագներէն, որոնք ասկաւորեայ կենաց հետ՝ անմահունակ հոգիդ իսկ կարող են դիւրաւ թակարթել. մանաւանդ թէ քոյ կեանքը կ'առնուն և իրենց մահը քեզ կու տան բաժին։ Եւ այնուհետեւ ուրախութեան բաժակդ՝ շուտով փոխեցի 'ի թոյն դառնութեան, և ծաղիկ հասակը քեզի ալ ուրիշ բան չպիտի պաղաթերէ՝ բայց եթէ խոցոտիչ փոշեր և տատասկներ։ Կը տեսնես արդեօք հոգւոյդ ('ի բնէ հաւատացեալ) դիմացը

նկարուած բացական և անշիջանելի հնոցը . գե-  
հեանն է այդ աղիողորմ բռնակալութեան գժոխոց :  
Կը տեսնես երկժանեւոր գիւցազին թելիարայ  
կառքը՝ հրեղէն անիւներով , զոր կը քաշեն եօթ-  
նաթիւ գեղանուհիներ մահացու մեզաց առ ’ի գա-  
հավիժել անդ . ահ , անդ պիտի տանին և զքեզ՝ ’ի  
լաց և ’ի կոծ յաւիտենից , եթէ չի գարշիս և մեր-  
ժիս անոնց բնակարաներէն :

Իսկ մենք յառաջ վարելով բանահիւսութեան  
թելը պետք ենք ըսել , թէ նկարչութիւնն իսկ՝ ո՞ր  
քոյր է Բանաստեղծութեան , և ոչ միայն անոր գը-  
րածը՝ կը նկարէ և ստեղծագործուած բառերն և  
դաղափարները՝ կը կենդանացնէ , այլ նոյն ինքն  
յաճախ կը ստեղծէ , և ստեղծածները՝ կը գեղերեսէ  
երանգօք , մեծապէս ներշնչուեցաւ գիշերոյ աղդե-  
ցութիւններէն : Եւ ով կընայ սուզ բանիւ ածել ’ի  
հանդէս բոլոր այն գիշերային տեսարանները , զորս  
նա օրուան լուսովը նկարեց և այսօր կը ներկա-  
յանան մեղ իբրև մի մի անդին գլուխ գործոցներ :  
Մանաւանդ թէ քանի՛ , քանի հրաշակերտք նկար-  
չութեան և պայծառացուցիչք բնութեան և հան-  
ճարոյ պիտի մնային յաւիտեանս անգնահատելի ,  
եթէ գիշերոյ ստուերները չի գանակաւորէին ա-  
նոնց հետ՝ կրկին ևս հիապահնչ գործելու համար :

Սակայն գիշերն իւր երազութեամբը կը վարէ կը  
տանի զիս , և ես չեմ բաւական գրել զամենային :  
Թանձը քունը՝ կապարի պէս ծանրացած է արդ  
աշացս վրայ . գրիչը ձեռքէս վար կ’ իյնայ , բայց ոչ  
եռանդն հոգւոյս :

Իսկ դու , ընթերցող , եթէ գիտես քաջ հիսուել  
զիմաստասիրութիւնն՝ ընդ բանաստեղծութեան , և  
միտքը՝ սրտի հետ , օն առեալ յառաջ վարէ գիշե-  
րոյ երգը , մինչև որ խառնուի այն տունջեան հետ :

Ահաւասիկ քեզ գիշեր խորհրդապատում . զի ինձ  
կը մնայ այսուհետեւ տիւ զուարթարար : Սակայն  
դու , չայր , ո՞ր բնաւից ես տէր և արարող գիշերոյ .  
դու , քուսուրը ձեռօքդ վակէ իմ աչքերս՝ ի քուն ,  
և յարո՞ զիս անդրէն ընդ այդուն՝ արթուն և  
զուարթուն :



huius ap. Venerabiliumque genit. quibus poli. festum uocat  
apostoli. quibus uocatur ab aliis dicitur magis quibus ap.  
magis p[ro]p[ter]e p[re]dictorum s[ed] uol[er]o ut p[ro]moto[ri]o q[ua]d 1112. non  
dicitur. s[ed] uol[er]o ut p[ro]p[ter]e p[re]dicti populi q[ua]m uic. sicut  
et ceteraque. h[ab]emus uero p[ro]p[ter]e poli. festum uice ap[osto]li. et  
etiam ap[osto]li

ՀՀ Ազգային գրադարան



NL0685908

